

Always standing by our community

Komitas.ca
FUNERAL COMPLEX

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

T 514.331.0400

ՀՄԸՄ-ի 100-ամեայ յոբելեանը նշուեցաւ մայր հայրենիքին մէջ



Կարդալ էջ 8

ՀՅԴ ԳԵՄ-ի Վանաձորի Ճամբար 2018-ը



ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) Վանաձորի Ճամբարը կայացաւ Յուլիս 23 – Օգոստոս 3: 8-րդ տարին ըլլալով Գանատայի ՀՅԴ ԳԵՄ-ը իր ամառային ճամբարը կազմակերպեց Վանաձորի մէջ: Դաստիարակչական բնոյթ կրող ճամբարի ԳԵՄ-ի երեք վարիչներուն միացան 5 վարիչներ Հայաստանի տարբեր քաղաքներէ եւ 6 օգնական վարիչներ Վանաձորէն:

ԳԵՄ-ի վարիչներու պատրաստած ամէնօրեայ դասընթացներն ու ծրագիրները ընդգրկեցին անգլերէն լեզուի դասընթացք, ազգային-յեղափոխական երգերու ուսուցում, ՀՅԴ պատմութիւն, ձեռնարկի աշխատանք եւ մարզանք: 120 վանաձորցի պատանիներ մասնակցեցան ճամբարին:

Համագրայինի Գանատայի շրջանի 39-րդ Ծրջանային ժողով



Կարդալ էջ 13

2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA



MARCHÉ
ADONIS

Un univers de fraîcheur



Donnez une touche
méditerranéenne
à vos BBQ en famille !

*Give a mediterranean touch
to your BBQ with the family!*

www.groupeadonis.ca

Suivez-nous



Հ.Մ.Ը.Մ. Գանատայի Շրջանի 48-րդ մարզական խաղեր



Նուիրում Հ.Մ.Ը.Մ.-ի Հիմնադրության 100-ամեակին

Լավալ // 31 Օգոստոս, 1, 2, 3 Սեպտեմբեր 2018



Հովանավորությամբ՝
Գրշի. Տեր Բարգեն Արք. Զարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Նախագահությամբ՝
Տեր եւ Տիկին Արթուր եւ Ալիս Մարգարեաններու



Բացման հանդիսություն Ուրբաթ, 31 Օգոստոս 2018

Լավալի Հայ կեդրոն
Երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ

- Գաղութային քայլարշաւ 2 քմ, նուիրում Հ.Մ.Ը.Մ.-ի 100-ամեակին
- Չափի փոխանցում եւ ջահավառութեան արարողություն
- Ելոյթ Համազգային Անի պարախումբի եւ Քնար երգչախումբի
- Գաղութային ճաշկերոյթ - խրախճանք

Փակման շքեղ հանդիսություն Կիրակի, 2 Սեպտեմբեր 2018, Մոնթրէալ

Complexe Sportif Claude-Robillard
1000 Avenue Émile-Journault, Montréal, QC H2M 2E7
Ժամը 11:30 - 16:30

- Ոտնագնդակի աւարտական մրցում – երեք տղաք
- Դրօշարշաւ 4 X 100 մ.
- Գեղարուեստական յայտագիր – Պարախումբեր եւ երգչախումբեր
- Աւանդական տողանցք եւ մրցանակաբաշխություն

Միբելի՝ հայրենակիցներ, կը հրաւիրենք ձեզ մեծ թիւով ներկայ գտնուելու վերոյիշեալ զոյգ հանդիսութիւններուն

Մուտքը ազատ

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆՆԴԷՍ

VICTORY DANCE
BAL DES VAINQUEURS

Մասնակցութեամբ սիրումս երգիչ՝
Էլի Պերպերեանի եւ իր նուագախումբին
եւ DJ Kevorkian-ի

Տեղի կ'ունենայ

Կիրակի, 2 Սեպտեմբեր 2018-ին
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

SHERATON LAVAL շքեղ սրահներուն մէջ,
2440 Laurentian Autoroute, Laval, QC H7T 1X5

Մուտքի նուէր \$100

Տոմսերու համար հեռաձայնել
Տիկ. Յասմիկ Պիլեմճեանի 514 831-4755
Տիկ. Զուարթ Տատաղեանի 514 582-4480

«Միասին դէպի յառաջ»





CARROSSERIE PRISME

Peinture & Débosselage

Garage Agréé



Expert en
Infiniti et Acura



INFINITI



ACURA

Raffi Koushian

Propriétaire

1430 rue Michelin Laval, Qc. H7L 5C2
Tél: 450 967-3948 • Fax : 450 967-1642
carrosserieprisme@bellnet.ca

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7



ALBERT ARKILANIAN

Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilanian@sutton.com

Cell: 514.962.8822

Bur: 514.426.9595

Fax: 514.426.9596



Satisfaction garantie ou je revends
votre propriété gratuitement!*

*certaines conditions s'appliquent




RESTAURANT MAROUCH

Cuisine Libanaise - Déjeuner - Boulangerie

514.623.5500 / 514.638.1670

Lebanese Breakfast
Foul, Hommus, Awarma,
Fatteh, etc...



Լաւագոյն Լիբանանեան
ճաշարանը Լաւալի մէջ
Հոյակապ նախաճաշ եւ
սպասարկութիւն

For further information
follow us on Facebook
784 Curé-Labelle, Laval,
QC H7V 2V3



ARMENIAN HERITAGE CRUISE® 2019

▪ Miami ▪ Roatan ▪ Costa Maya ▪ Nassau ▪ Cozumel

January 20-27, 2019

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!

Prices starting at:

INSIDE CABIN	\$1,034
CENTRAL PARK VIEW	\$1,134
OCEAN VIEW	\$1,234
CENTRAL PARK BALCONY	\$1,374
BOARDWALK BALCONY	\$1,359
OCEAN VIEW BALCONY	\$1,524
JUNIOR SUITES	\$2,319
GRAND SUITES	\$3,519

Rates are per person for double occupancy cabins:

Limited additional luxury suites available upon request. For pricing on triple and quad occupancy cabins, contact TravelGroup.

Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$137.45 per person is additional. Rates and Information subject to change at any time without notice.

For Reservations Contact:

Local 561-447-0750
Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mizner Blvd., Suite 14
Boca Raton, FL 33432
AHC@travelgroupint.com



KEVORK ARTINIAN



HAROUT PAMBOUKJIAN
www.armenianheritagecruise.com



KHATCHIG JINGIRIAN

Call Arpi Bostajian-Ashkarian
(519) 748-2672
arpi@bostgroup.ca

«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2018-2019 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2018

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունէայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:



Բարեհաճեցէ՛ք 2018-2019 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով հետեւեալ է-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ է-նամակով ուղարկուած դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :

Ո՞վ է Դաշնակցականը (Վերահարստացման Փորձ)

ՀՅ Դաշնակցութեան ստեղծած արժեքային համակարգին մէջ մեծ տեղ կը գրաւեն գաղափարական ու աշխարհահայեացքային պատկերացումները: Մեծ տեղ կը գրաւեն նաեւ նոյն այս գաղափարական մտածողութիւնն ու ատոր արդիւնք՝ առաջադրանք-նպատակները:

Հսկայական գրադարան մը կը լեցնեն Դաշնակցութեան արտադրած գաղափարական թէ քաղաքական միտքի արդասիքը հանդիսացող տեսաբանական գործերը՝ Վարանդեանէն մինչեւ Ռուբէն, Ս. Վրացեանէն մինչեւ Նաւասարդեան, ու մինչեւ Հրաչ Տասնապետեան ու Սարգիս Զէյթիւեան:

Այս բոլորին մէջ կարեւոր տեղ կը գրաւեն Դաշնակցականի (գլխագիրը Դ-ով) կերպարը բնութագրող մտածողներ՝ Ռուբէնէն սկսեալ մինչեւ այն սերունդը, որ 1960-ականներու աւարտէն սկսեալ ու գրեթէ երեսնամեակ մը վարեց ՀՅ Դաշնակցութեան ղեկը: Այսինքն՝ Հրայր Մարուխեան, Հրաչ Տասնապետեան, տոքթ. Բաբգէն Փափագեան եւ Սարգիս Զէյթիւեան, որոնք իրենց աշխատութիւններով, խմբագրականներով թէ հանրային ելոյթներով բնութագրեցին դաշնակցականի կերպարն ու անոր գաղափարական աշխարհը:

Մէկ խօսքով, դաշնակցականի մտակառոյցը, այդ անհատին ներքին էութիւնն ու կերպարը բնութագրող գաղափարական հարուստ ենթահող կայ: Այս բոլորը կը միահիւսուին ու կը բխին ՀՅ Դաշնակցութեան ոչ միայն Ծրագիրէն ու Կանոնագիրէն, այլ նաեւ՝ պատմութենէն, գաղափարաբանութենէն, աւանդութիւններէն, անգիր օրէնքներէն, դաշնակցականի իմացական թէ բնագոյնի գրասեղաններէն, որոնք տասնամեակներու ընթացքին ստեղծած են ամուր հենք ու պատուանդան:

Այս նոյն հենքը, այսօրուան հայկական թէ միջազգային զարգացումներու լոյսին տակ, անհրաժեշտ է ոչ միայն պահպանելը, այլ նաեւ՝ գայն նոր տար-

րերով հարստացնելը: Տարբեր խօսքով, այս պատուանդանին վրայ նոր շերտեր աւելցնելու պարտաւորութեան տակ է դաշնակցական Միտքը: Ընդ է, սփիւռքի մէջ, յատկապէս 1970-80-ական տարիներուն մեր երիտասարդութեան գաղափարականացումը եւ քաղաքականացումը նոր փուլ նուաճեցին՝ շնորհիւ Հայ դատին ի նպաստ մղուող պայքարին: Ընդունելով հանդերձ, որ նոյն այդ միտքը եւ իմացական պատրաստածութիւնը իրենց բարեբար դերը խաղացին արցախեան ազատագրական շարժումին ընթացքին, այսուհանդերձ, մենք կը գտնուինք նոյն այդ Դաշնակցականի կերպարին գաղափարական խորհրդին վրայ քար մը եւս աւելցնելու անհրաժեշտութեան դիմաց:

Իսկ ի՞նչ են այս պարտաւորութիւնը ընդգծող ազդակները:

Վերջին երեսուն տարիներուն ընթացքին հայկական աշխարհէն ներս երկու շատ աչքառու դրական զարգացումներ արձանագրուեցան, որոնք դաշնակցական Միտքին վրայ տակաւին իրենց դրական, խորքային ու մանաւանդ համատարած հետքը չեն ձգած:

Առաջինը հայկական հողի, բռնագրաւուած հայրենի հողին ազատագրական շարժումին փաստն է՝ Արցախի ազատագրական շարժումին իրրեւ արդիւնք: Աւելի քան մէկ դարէ ի վեր առաջին անգամ ըլլալով հայ ժողովուրդը յաջողեցաւ հայրենի հող ազատագրել ու ընդարձակել հայրենիքին սահմանները՝ իբրեւ խորհրդի գալիք Միացեալ Հայաստանի: Ասոր մէջ ՀՅԴ-ի դերակատարութիւնը, գաղափարական, քաղաքական ու գործնական-մարտական առումներով, առանցքային պէտք է համարել: Սա վիճաբար հաստատու է:

Երկրորդը այսօր, 1991-էն ստղին, ՀՅԴ-ն դարձած է հայկական սեփական պետութեան մէջ գործող կուսակցութիւն՝ ի դէմս մինչեւ այդ թուականը միայն սփիւռքի մէջ սահմանափակուած ըլլալուն՝ շատ յստակ պատճառներով:

Դաշնակցական անհատին ներքին հոգեկերտուածքը, մտածողութիւնը կամ կերպարը անհրաժեշտ ու համապատասխան չափով չեն զարգացած այս երկու անկիւնադարձային իրադարձութիւններու բարեբար ազդեցութեամբ:

Դաշնակցականի «սփիւռքեան» հոգեկերտուածքը, բնական թափով, ՀՅԴ-ի՝ Հայաստանի, հայրենիքի՝ մէջ գործունէութեան դաշտ մտնելու բերումով, ներմուծուած է անկախ պետական կառոյցով յատկանշուող Հայաստանի մէջ. այսինքն՝ ա՛յն Հայաստանի մէջ, ուր ի տարբերութիւն սփիւռքի, պետականութեան ենթադրած խաղի նոր կանոններ կան թէ՛ վարչական կառավարման, քաղաքական եւ թէ՛ մանաւանդ՝ պատասխանատուութեան իմաստներով: Բարեբախտաբար, 1991-էն ստղին, հայաստանաբնակ դաշնակցականի հոգեկերտուածքը կը գործէ (կամ առնուազն կը ձգտի գործելու) ըստ այս նոր խաղի կանոններուն: Սփիւռքի մէջ, սակայն, այս բարեշրջումին նշանները տակաւին շատ սաղմնային են, երբեմն ալ՝ անգոյ:

Հետեւաբար դաշնակցականի կերպարը հասարակ յայտարարի բերելու անհրաժեշտութիւնը շատոնց է որ կը զգացուի:

Երրորդ կէտը այն է, որ Խ. Միւլիանի փուլումէն ետք, գրամատիրական աշխարհակարգը (իր նէօլիպերալ կամ նէօպահայանոգական թեւերով. երկուքն ալ տեղ մը կը նոյնանան) հետզհետէ ստացած է աւելի վայրագ ու ընչաքաղց նկարագիր: Ասոր կը միանայ ելեւմտական գրամատիրութեան ներկայ ընթացքը, ուր աշխատաւոր-արտադրող դասակարգը լուսանցքէն դուրս մղուելու ընթացքի մէջ կը գտնուի:

Ասոր վրայ կ'աւելնայ նաեւ նոյն այս աշխարհակարգի ապագա գաղափարական վարքագիծը, որ կը ձգտի համաշխարհային իմաստով «համահարթեցման»՝ գաղափարաբանութիւնները չէզոքացնելու ճամբով աշխարհը վերածելու միայն ու միայն մէկ ու մեծ շուկայի

մը, ուր կարելի է բնական պաշարներէն օգտուել՝ նուազագոյն գիներով եւ արտադրութիւններ վաճառել առաւելագոյն գիներով: Մէկ խօսքով, «գրամատիրական պոլիեղիզմ»-ի գրասեղաններու ճամբով համաշխարհային ընկերային-տնտեսական կարգուսարքը կը սպառնայ ազդերու եւ ժողովուրդներու ազգային, հոգեմտաւոր ու մշակութային ինքնությունութեան: Ասոր դէմ պայքարի միակ գաղափարական հենքը կը մնայ ընկերվարութիւնը, հայկական իրականութեան մէջ՝ Դաշնակցութեան՝ դաւանած ընկերվարութիւնը:

Այս ընդհանուր միջավայրը իր ժխտական ազդեցութիւնը կը ձգէ ոչ միայն հայութեան, այլ նաեւ դաշնակցական մարդու հոգեկերտուածքին վրայ: Տարբեր խօսքով, վտանգուած են դաշնակցական մարդու դիմագիծը, ներաշխարհը, մտակառոյցը, որովհետեւ ան (ինչպէս՝ ամբողջ հայութիւնը ու բազմաթիւ ուրիշ ժողովուրդներ) ենթակայ կը մնայ ապագային ու վայրագ գրամատիրական ուժերու ուժեղ քարոզչութեան:

Հետեւաբար ՀՅ Դաշնակցութիւնը կը գտնուի ոչ միայն այս երեւոյթին դէմ պայքարին, այլ դաշնակցական մարդու հոգեկերտուածքի բերեղացումին լուրջ գործին դէմ յանդիման:

Տարբեր խօսքով, յենելով մեր գաղափարական ու հոգեմտաւոր հարուստ ժառանգութեան վրայ՝ մենք խնդիր ունինք նաեւ (ու մանաւանդ) հարստացնելու նոյն այդ ժառանգութիւնը՝ վերոնշեալ երեք հիմնական կէտերու լոյսին տակ:

Եւ ուրեմն, քննարկման այս սիւնակներով շեշտադրումը պիտի կատարուի մտածուած խօսք ու միտք փոխանցելու (ի հարկին՝ բանավէճով) գաղափարին վրայ:

Այս սիւնակով ալ կը սկսինք մեր երթը:

«Դրօշակ»

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 8AM - 6PM
SUNDAY 8AM - 3PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmail.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՂԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Արամի Արձանին «Առեղծուածը»

17 Յուլիսին, Երեւանի Հանրապետութեան հրապարակէն ոչ շատ հեռու, բացումը կատարուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրի հանգամանքով ճանչցուած ազգային հերոս, Դաշնակցական գործիչ ու ղեկավար Արամ Մանուկեանի արձանին: Առաւել քան վեց ամիսներէ ի վեր, շատ բան ըսուեցաւ այս արձանին մասին, անոր մտադրացումէն (concept) մինչեւ արձանի տեղադրման վայրին մասին, հասնելով արձանը պարտուած Եռագոյնի գոյներու (ան)հարազատութեան, եւ այլն:

Իրողութիւնը սակայն կը մնայ այն, որ նոյնինքն իր անկախութենէն 28 տարիներ ետք, հայրենի պետութիւնը եկաւ անդրադառնալու այս շեշտակիօրէն եզակի անհատականութեան եւ ղեկավարին՝ Արամ Մանուկեանի պետականակերտման գերմարդկային ջանքերուն եւ արդիւնաւէտութեան, եւ ըստ այնմ առաւ այն քայլերը, որոնց վերջերս հետեւեցանք առցանց եւ լրատուական միջոցներով:

Իսկապէս հոգեպարար երեւոյթ էր 17 Յուլիսին տեղի ունեցածը: Տեսնել Հայաստանի նորընտրեալ վարչապետն ու նախագահը, Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսն ու խորհրդարանի նախագահը, ՀՅԴԻ ներկայացուցիչով ամբողջացնելով պատուով հիւրերու առաջին շարքը, պատկառելի ժողովուրդին ներկայացուցին Արամի արձանը: Բազմութիւնը (մեծամթիւ, բայց անշուշտ կրնար աւելին ըլլալ) եկած էր շնորհակալութիւն յայտնելու իր հարազատ որդիին, որ 1918ի Մայիսի նախորդող ամիսներուն, Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհուրդին կողմէ Երեւան ուղարկուած լիազօր ներկայացուցիչի հանգամանքով, իր ջանքերով Երեւանի մէջ յառաջացուած Յատուկ Կոմիտէի անդամ ըլլալով, արդէն իսկ Ռուսերու նահանջով սկսած պետականութեան բացը գոցելու յատուկ աշխատանքի լծուած էր: Այս մասին առատ գրականութիւն գոյուածութիւն ունի, Արամի գործին՝ Վանէն Երեւան, Մայիս 28, ու մինչեւ իր անժամանակ մահը 1919ի Յունուարին, վարակուած տիֆով:

Ան այսօր պաշտօնապէս կը կոչուի Հայաստանի Հանրապետութեան Հիմնադիր: Եւ այդ, անշուշտ արդարացիօրէն: Չարմանալին այն է, որ այս անուանումը «ձեռք ձգելը» տեւեց 28 տարի, եթէ զանց առնենք Հայաստանի Խորհրդայնացման տարիները: Ելլելով դէպքերու ընթացքէն, անշուշտ որ դաշնակցականօրէն գործած ազգային ղեկավարը, Հանրապետութեան Հիմնադիրը, փառաբանանքի պիտի չարժանանար Հայաստանի խորհրդային օրերուն, սակայն պատճառ չկար որ սպասուէր Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակին, որպէսզի Արամի՝ Հիմնադրի հանգամանքը պետականօրէն ճանչցուէր եւ շնորհահարուէր: Միշտ կարելի է «աւելի լաւ է ուշ՝ քան երբեք» ասացուածքով առաջնորդուել: Բայց ինչո՞ւ այս աստիճան ժլատութիւն: Վասն ինչի՞:

Դաշնակցութեան համար, ինք իր զաւակներուն գովքը հիւսելը ո՛չ հաճելի է, ոչ ալ մաս կը կազմէ իր նկարագրին: Հաւանաբար այս պատճառով ալ Դաշնակցութիւնը ինքն իրեն չվերապահեց Արամը դնել պանթէոնի վրայ: Իսկ հիմա, որ առիթը ունեցայ վերջերս կարգաւոր 1920էն սկսեալ բոլորեկաններու հակադաշնակցական մոլուցքին աստիճանութեան մասին, կ'անդրադառնամ, թէ որքան անհոգ, վախազուր եւ կրաւորականէն ժխտականի անցնող մտապատկեր մը պէտք է ստեղծուած ըլլայ հայրենի ժողովուրդին մօտ՝ «յետադիմական», «ազգայնամոլ», «հա-

կայեղափոխական», «ներքին թշնամի» «Դաշնակ»ներուն հանդէպ: Եթէ 70 տարի Արամ Մանուկեան կարելի էր հայրենի ժողովուրդին ներկայացնել այնպէս, ինչպէս որ էր, Եռագոյնին ու «Մեր Հայրենիք»ին վերադարձով Երեւան, ժամանակը չէ՞ր որ Արամն ալ վերադառնար իր հոգեկան աքսորէն, մանաւանդ որ անոր աճիւնները երբեք չէին թողած քաղաքամայր Երեւանը: Հակառակ անոր, որ նախընտրելի պիտի ըլլար ամէն ինչ չբարդել վերանկախացած Հայաստանի մեր առաջին նախագահին, Լեւոն Տէր Պետրոսեանի ուսերուն, դժուար չէ խոկալ այն բոլոր մտնուած ազգային առիթներուն մասին, որոնք Հայաստանն ու Սփիւռքը կորսնցուցին այդ շատ բախտորոշ առաջին 7-8 տարիներուն ընթացքին: Ուրեմն, եթէ Դաշնակցութիւնը չէր ուզեր փառաբանել իր «տղան», ապա անցնող շաբաթ, հարիւր տարուան ուշացումէ ետք, Հայաստանը պաշտօնապէս եկաւ ըսելու, որ Արամը ի՛րն է, որ ան Արամով հպարտ է, եւ թէ առանց Արամի եւ անոր հետ աշխատած սերունդին եւ ժողովրդային զանգուածին, այսօր Հայաստան կրնար սոսկ ծանօթագրութեան մը վերածուած ըլլալ պատմութեան գիրքերու փոշոտ էջերուն մէջ:

Սոսկապէս, ինչպէս Պոլիվիան, Վենեզուելան, Քուրմալիան, Էքուատորը, Փերուն եւ Փանաման կ'ըսեն, որ Սիմոն Պոլիվարը իրենցն է եւ հպարտ են իրմով կամ այնպէս, ինչպէս ի հեճուկա Ուոթըրլուի մէջ իր պարտութեան, Ֆրանսան կը պնդէ, որ Նափոլէոնը իր էութիւնն իսկ սահմանող անձն է եւ արժանի է թաղուելու Փարիզի Էնվալիտի (Les Invalides) դամբարանին մէջ, Արամն ալ Հայաստանի մէջ է:

Ուշագրութիւն, էնվալիտ ըսելով կ'առընչուինք Արամի հետ կապուած այլ գերզգայուն հարցի մը: Թէ ու՞ր պէտք է տեղադրուի կամ տեղադրուէր Արամի արձանը: Անկեղծ ասած, ներկայի վայրն ալ ինձի համար վատ չէ: Բայց արդեօք Արամի հետ կապուած որեւէ հարց «վատ չէ»ով կարելի՞ է սահմանել: Շատեր ըսին, որ անոր արձանը անպայմանօրէն պէտք էր ըլլար Հանրապետութեան հրապարակին վրայ: Հաւանաբար իրաւացիօրէն: Արդեօք դարձեա՞լ ժամանակի հարց է այդ: Հիմա կը հասկնա՞ք, թէ ինչո՞ւ էնվալիտին ակնարկուեցաւ: Պետութիւն կերտած մարդը, Հանրապետութեան Հիմնադիրը, մայրաքաղաքի սիրտին մէջ ըլլալով՝ ամէն օր պիտի առթէ ազգային պարծանք, ինքնավստահութիւն, պարտականութեան գիտակցութիւն, ազգային պատկանելիութեան հրճուանք եւ անարդար ոտխար յաղթահարելու ամէնժամանայ պատրաստակամութիւն:

Արձանի տեղադրման վայրէն անցնինք անոր մտադրացումին: Դարձեալ շատ մեղան հոսեցաւ այս նիւթին շուրջ: Ոմանք Արամը պարուրող Եռագոյնին մէջ տեսան կնոջական հագուստի նմանութիւն մը (հասնելով մինչեւ հնդկական սարի տարազի օրինակին): Ուրիշներ նկատել տուին, որ Եռագոյնի գոյները «պաղ» էին: Տակաւին ուրիշներ արդարացիօրէն շեշտեցին, որ Խորհրդային Միութեան օրով կանգնեցուած Սասունցի Դաւիթի արձանին հետ «կը զգաս», սակայն Արամի արձանը հարազատօրէն քեզ հետ «չի խօսիր»:

Խղճի հանդարտութեամբ կարելի է ըսել, որ բոլոր մտահոգութիւններն ալ ունէին որոշ արդարացի բաժիններ, եւ, յիշուելի, կը մնային ու կը մնան միտք չարքիղոյ նիւթեր: Անտարակոյս, ճաշակները վիճելի են: Բայց իրողութիւնը կը մնայ այն, որ այս շուրջ 20 ոտք բարձրութեամբ արձանը քանդակուած է նաեւ օգտագործելով կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն բնական ժայռեր, որոնք, անշուշտ, հարիւր տոկոսով պիտի չհամարուին պատասխանէին մեր դրօշի պաշտօնական



երեք գոյներուն: Այսօր Արամը սլացիկ հասակով նստած է Երեւանի մայր հրապարակէն ոչ շատ հեռու, եւ բոլորին կը պարտադրէ իր քով երթալ ու իր հետ զրուցել ազգային հարցերու մասին, Հայաստանէն Արցախ ու Սփիւռք:

Հիմա էնվալիտը, 20 ոտքը, եւ այլն, տեղ կու տան ուրիշ հարցի մը: Ինչպէս գիտէք, Արամը մահացաւ 1919ին, Երեւանի մէջ, իր ետին թողնելով իր կինն ու դուստրը: Տարբեր գործնական պատճառներով, իր կողակիցն ու աղջիկը երեք անգամ գինք կը թաղեն, այսպէս՝ իր աճիւնները երկու անգամ տեղափոխելով 1919ի առաջին թաղման վայրէն: Աստուծոյ վերջինը 1929էն մինչեւ օրս Արամի գերեզմանը կը գտնուի Երեւանի Թոխմայի գերեզմանատան մէջ՝ անշուք եւ աննախանձելի վիճակի մէջ: Աւելին, Արամի Տան փողոց դիմակայող պատը (facade), ցարդ փրկուած է Երեւանի կեդրոնական պողոտաներէն մէկուն մէջ, սակայն անոր ճակատագիրը կը մնայ տակաւին վճռելի:

Վերադառնալով էնվալիտի ու Նափոլէոնի, Պոլիվարի, ու այս պարագային ալ Արամին հետ կապուած այս երկու վայրերուն (տուն եւ գերեզման), արժէ այս մասին ալ բարւօք ու ազգային հպարտութիւն արթող լուծումներ գտնել, Արամը նոր սերունդներու սիրտերուն մէջ աւելի ցայտուն կերպով ներկայութեան վերածելու նպատակով:

Վերջապէս, իրեւ դաշնակցական մարդ, զիս կը տագնապեցնէ այս բոլորին հետ կապուած մէկ այլ խորթ երեւոյթ: Արամի արձանին այս երեւոյթը ինձի համար, ճիշդ այդ է, երեւոյթ մըն է: Բո՛ւն հարցը կը կայանայ այնտեղ, ուր Հայաստանի վերանկախացումէն ասդին

կը շարունակուի ՀՅԴԻ աւանդին պատկանող եւ մեր պայքարի ամէնէն ցայտուն երեւոյթներն ու աշխատանքները Հայաստանի տարածքին ազգայնացնելու ու զանոնք իրենց դաշնակցական պարունակէն, — պիտի ուզէի հաւատալ, — ոչ գիտաւորաբար, այլ անգիտութեան վրայ հիմնուած՝ պարպելու ջանքին կամ ընթացքին մէջ: Օրինակները շատ են, սակայն միայն մի քանին կ'արժէ յիշել հոս, Սարգարապատ-Մայիս 28, Արամ Մանուկեան, Ա. Հանրապետութեան պետականակերտման աշխատանք, Նեմեսիս, Գարեգին Նժդեհ-Չանգեղուր-Լեւոնաս յայտանքի կառավարութիւն, Սփիւռքեան նորագոյն ցուցական պայքարի ընկալում, Արցախեան ազատամարտի ՀՅԴԻ գերակատարութիւն, եւ այլն:

Լա՛ւ է, որ Դաշնակցութեան գործերն ու իրագործումներուն ծնունդ տուող հերոսները կ'ազգայնացուին: Անոնց ճիշդ տեղը հո՛ն է: Սակայն, Credit is due where it is deserved. Ակնկալուածը ՀՅԴԻ փառաբանանաքը չէ: Այս հերոսներն ու իրագործումները Դաշնակցութեան դաղափարախօսութեան ու Մրագիրին ծնունդն էին եւ արգասիքը անոր մարմիններու-ժողովներու որոշումներուն: Այս բոլորը, եւ շատ աւելին Դաշնակցութեան կենսագրութիւնն են, ընդելուզուած հայ ազգի պատմագրութեան հետ: Այս էջերու ճիշդ հասցեագրումն ու շաղկապումը, ինչպէս նաեւ արդար բնութագրուած պիտի նպաստեն նորանոր նկրտումներու աւելի հեշտ ստեղծման եւ արդիւնաւորման, ի սպաս մեր վեհ հայրենիքին:

Այսքան Արամի արձանի առեղծուածին մասին:

Տարօն Տէր Խաչատուրեան

[AB] **ALINE** [AB]
BEKEREJIAN
 NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ՊԵՏՐԵՆՃԵԱՆ

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կայրածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կայրածք	Estate
Marriage	Սնուստութիւն	Marriage
Procuratoin	Փոխակարգաւոր	Power of Attorney

180, rue Fleury ouest
 Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
 F 514.381.1818

aline.b@notarius.net
 www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
 Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Փրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

ՀՄԸՄ-ի 100-ամեայ յոբելեանը Ըշուեցաւ մայր հայրենիքին մէջ

100-ամեակի Յուշաֆանդակի բացում

19 Յուլիս 2018–ին, Բիւրականի մէջ, Հայաստան, ընթացք առին ՀՄԸՄ-ի 100-ամեակի տօնակատարութիւնները՝ միութեան 110 մասնաճիւղերուն նուիրուած յուշաքանդակի բացումով, ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանի, փոխնախարար Բարգէն Տէր Գրիգորեանի, Կոտայքի եւ Արագածոտնի մարզպետներ Ռոմանոս Պետրոսեանի եւ Աշոտ Սիմոնեանի, Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խոջեանի, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան անդամներու, համա-ՀՄԸՄ-ական 11-րդ ընդհանուր բանակումի խմբապետական կազմի ներկայացուցիչներուն:

Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան իր խօսքին մէջ հաստատեց, թէ Սփիւռքի նախարարութիւնը եւ Հայաստանի նոր կառավարութիւնը իրենց վճռակամ տրամադրութիւնը կը յայտնեն միշտ ըլլալու ՀՄԸՄ-ի կողքին:

Նշենք, որ Բիւրականի բանակավայրի մուտքին կանգնեցուած յուշաքանդակը կրկնօրինակն է միութեան 90-ամեակին առիթով՝ 2005-ին Տէր Զօրի Նահատակաց յուշահամալիրին մէջ կանգնեցուած յուշակոթողին, որ Սուրիոյ պատերազմի սեւ օրերուն քարուքանդ եղաւ հաւատարմողական ուժերուն կողմէ:

ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ական Բանակումի բացում

Յուշաքանդակի բացումէն ետք, ներկայ հիւրերը, պատասխանատուներն ու ժողովուրդը ուղղուեցան բանակավայրին գլխաւոր դաշտը, ուր տեղի ունեցաւ 100-ամեակի բանակումի բացումը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանով:

Բանակումին կը մասնակցէին մօտ 1200 սկաուտներ՝ Շուէտէն, Հոլանտայէն, Մոսկուայէն, Վիէնայայէն, Միւնիխէն, Յունաստանէն, Կիպրոսէն, Պուլկարիայէն, Ֆրանսայէն, Անգլիայէն, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն, Քանադայէն, Հարաւային Ամերիկայի երկիրներէն, Աւստրալիայէն, եւ տակաւին՝ Եգիպտոսէն, Երուսաղէմէն, Յորդանանէն, Իրաքէն, Քուէյթէն, Սուրիայէն, Լիբանանէն, Իրանի «Արարատ» եւ «Նայիրի» միութիւններէն եւ անշուշտ ազատ ու անկախ Հայաստանէն:

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսեան իր խօսքին մէջ ըսաւ. «Անհրաժեշտ է, որ ուխտէք այս գեղեցիկ ու չքնաղ երկրին մէջ ըլլալ: Եթէ ոչ դուք, գէթ ձեր գաւակները հասակ առնեն Հայաստանի մէջ»:

Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնեան իր կարգին հաստատեց, որ ՀՄԸՄ իր արժանի հետքը կը ձգէ հայրենիքէն հեռու ապրող պատանիները հայրենիքին կապող իր նախաձեռնութիւններով, վաղուան հզօր Հայաստանի կերտման իր առաջադրանքներով:

Խօսքերու աւարտին, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութիւնը 100-ամեակի յուշանուէրներով պատուեց Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեանը, Կոտայքի եւ Արագածոտնի մարզպետներ Ռոմանոս Պետրոսեանն ու Աշոտ Սիմոնեանը:

Հիմնադիր Երրորդութեան Յուշաֆանդակներու բացում

Շաբաթ, 21 Յուլիսի առաւօտեան ժամը 10:00–ին, ՀՄԸՄ-ի հիմնադիր երրորդութեան՝ Շաւարշ Քրիսեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինգլեանի յուշաքանդակներուն բացումը տեղի ունեցաւ ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի Երեւանի կեդրոնին մուտքին:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Շաւարշ Քրիսեանի եղբօրը թոռը՝ տոքթ. Շաւարշ Քրիսեան, նահատակ Վարդան Բախշեանի մայրն ու քոյրը՝ Այտա եւ Աննա Բախշեաններ, ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, հիւրեր եւ ՀՄԸՄ-ականներ:

Բացման արարողութեանէն ետք, ներկաները բարձրացան ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի կեդրոնին երրորդ յարկը, ուր տեղի ունեցաւ «Վարդան Բախշեան գրադարան–ընթերցարան»-ին բացումը:

100-ամեակի տողանցքը՝ Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ

100-ամեակի պատմական տողանցքը Շաբաթ, 21 Յուլիսի երեկոյեան ընթացք առաւ Երեւանի Ազատութեան հրապարակէն: Տողանցքը առաջնորդեցին ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի շեփորախումբը եւ վեց դրօշակիրներ, որոնց հետեւեցան համա-ՀՄԸՄ-ական բանակումի մասնակից պատուիրակութիւնները՝ ալքերեանական շարքով: Պատուիրակութիւններու կարգին, առաջին անգամ ըլլալով, տողանցեցին նաեւ աշխարհի չորս ծագերէն եկած միութեան վաստակաշատ նախկին խմբապետ–խմբապետու-

հիները եւ ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի սկաուտական շարքերը:

Տողանցող պատուիրակութիւնները Երեւանի Հանրապետութեան հրապարակին մէջ ողջունեցին Սփիւռքի եւ Գիւղատնտեսութեան նախարարներ Մխիթար Հայրապետեան եւ Արթուր Խաչատրեան, Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսեան, Հայաստանի մէջ հաւատարմագրուած Եգիպտոսի, Յորդանանի եւ Լիբանանի դեսպանները, Միացեալ Նահանգներու դեսպանատան ներկայացուցիչները, ՀՅԴ Բիւրոյի եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչներ Հրանդ Մարգարեան եւ Արսէն Համբարձումեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, միութեան 26 շրջաններու պատասխանատուներ, 100-ամեակի տօնակատարութիւններու «կնքահայրեր», հիւրեր եւ հրաւիրեալներ:

Յաջորդաբար խօսք առին Սփիւռքի նախարարը, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արսէն Համբարձումեան, ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի ատենապետ Դաւիթ Յակոբեան եւ համա-ՀՄԸՄ-ական 11-րդ բանակումի ընդհանուր խմբապետ Թալին Օրտողլեան:

Ետաբլուր եւ Արամ Մանուկեանի արձանի այցելութիւն

Կիրակի, 22 Յուլիսի առաւօտեան համա-ՀՄԸՄ-ական 11-րդ բանակումի խմբապետական կազմի անդամներ եւ ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի սկաուտներ այցելեցին Ետաբլուր:

Յաջորդ փուլը եղաւ Արամ Մանուկեանի նորաբաց արձանը: ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու ընկերակցութեամբ, համա-ՀՄԸՄ-ական 11-րդ բանակումի խմբապետական կազմը այցելեց Արամի արձան, ուր դիտեղեց յարգանքի ու յիշատակի ծաղկեպսակ մը:

Վազգէն Սարգսեանի Անուան Զօրանոց Այցելութիւն

Կիրակի օրուան այցելութիւնները եզրափակուեցան Վազգէն Սարգսեանի անուան զօրանոց այցելութեամբ: Այցելութիւնը կատարուեցաւ համա-ՀՄԸՄ-ական 11-րդ բանակումի մասնակից 650 սկաուտներով՝ առաջնորդութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու:

Ընթացքին, Հայաստանի Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան ողջունեց ՀՄԸՄ-ը իր «չնորհալի, չնորհակալ եւ հայրենանուէր գործուէութեան համար» եւ յայտնեց, թէ սփիւռքը եւ Հայաստանը անբաժանելի են իրարմէ: Փորձութեան պահերուն բաժանարար բոլոր գիծերը կը ջնջուին:

Զօրանոց այցելութիւնը եզրափակուեցաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան միջեւ յուշանուէրներու փոխանակումով:

ՀՄԸՄ-ի 100-ամեակի փառաշուք տօնակատարութիւն

24 Յուլիսի Ալեքսանտր Սպենդիարեանի օփերայի սրահին մէջ տեղի ունեցաւ փառաշուք տօնակատարութիւն նուիրուած ՀՄԸՄ-ի 100-ամեակին, նախագահութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի, հովանաւորութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսներուն:

Տօնակատարութեան իրենց ներկայութեամբ ՀՄԸՄ-ը պատուեցին նախագահ Արմէն Սարգսեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Արցախի Հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ Կարէն Աւետիսեան, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի ներկայացուցիչ Արշակ եպս. Խաչատրեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչներ Նարեկ արք. Ալեքեմեզեան եւ Պետրոս Վրդ. Մանուկեան, հայ Կաթողիկէ Գրիգոր–Պետրոս 20-րդ կաթողիկոս–պատրիարքի ներկայացուցիչ Բաֆայէլ արք. Մինասեան, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու միութեան կեդրոնական մարմինի ատենապետ վրդ. դոկտ. Փոյ Հայտոսեան, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պաքճեան, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արսէն Համբարձումեան, Հայաստանի գիւղատնտեսութեան նախարար Արթուր Խաչատրեան, Լիբանանի զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, Կիպրոսի պետական երեսփոխան Վարդգէս Մահտեսեան, Արցախի Հանրապետութեան Մերձաւոր Արեւելքի ներկայացուցիչ Կարօ Քէլպպաճեան, Պուրճ Համուտի եւ Այնճարի քաղաքապետներ Մարտիկ Պօղոսեան եւ Վարդգէս Խոջեան, Համաշխարհային սկաուտա-

կան շարժումի եւրասիական տարածաշրջանի ներկայացուցիչ Շրինաթ Թրումել, ՀՕՄ-ի եւ Համազգայինի Կեդրոնական վարչութիւններու ներկայացուցիչներ, հայրենի հիւրեր եւ 100-ամեակի տօնակատարութիւններու «կնքահայրեր»: Ներկայ էին նաեւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, միութեան 26 շրջաններու պատասխանատուներ եւ 100-ամեակի տօնակատարութիւններուն մասնակցելու համար Երեւան ժամանած բազմահարիւր ՀՄԸՄ-ականներ:

Տօնակատարութիւնը սկսաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի ներկայացուցիչ Արշակ եպս. Խաչատրեանի Տէրունական աղօթքով եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեան գիրին ընթերցումով:

Այնուհետեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին օրհնութեան գիրը ընթերցեց Պետրոս վրդ. Մանուկեան:

Տօնակատարութեան խօսք առաւ նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան: Ան ջերմօրէն շնորհակտեց ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակը եւ նշեց, որ Հայաստանի թաւշեայ յեղափոխութիւնը կեանքի կոչեց ՀՄԸՄ-ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր–բարձրացուր»-ը:

100-ամեակի Կալա ընթրիք

100-ամեակի պաշտօնական տօնակատարութեան յաջորդեց կալա-ընթրիքը, որուն ներկայ գտնուեցան Հայաստանի նախագահն ու տիկինը, հայրենի պետական հիւրեր, ազգային մարմիններու ներկայացուցիչներ, ՀՄԸՄ-ի բարերարներ ու բարեկամներ:

Ընթրիքին սրտի խօսքեր փոխանցեցին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան:

ՀՄԸՄ-ի 100-ամեակի Դրոշմաթուղթի հրապարակում եւ պատմութեան նուիրուած գիտաժողով Երեւանի մէջ

ՀՄԸՄ-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն եօթերորդ օրը յատկացուեցաւ պետական արտօնութեամբ յատուկ դրոշմաթուղթի հրապարակման եւ միութեան հիմնադրութեան, կազմաւորման եւ տարածման նուիրուած գիտաժողովին, որոնք տեղի ունեցան սփիւռքի նախարարութեան դահլիճին մէջ:

Դրոշմաթուղթի հրապարակման յաջորդեց 100-ամեակի գիտաժողովը, որուն բացման նիստին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սփիւռքի փոխնախարար Բարգէն Տէր Գրիգորեան:

Գիտաժողովին ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան խօսքը ուղղեց տոքթ. Իշխան Եղիայեան:

Ապա, գիտաժողովը իր աշխատանքներուն անցնելով, չորս նիստերով լսեց չորս գեկուցումներ, որոնց շուրջ տեղի ունեցաւ քննարկում եւ արժեւորում:

Նիստերու աւարտին, գիտաժողովին հիւրաբար մասնակցող տոքթ. Շաւարշ Քրիսեան իր սրտին խօսքը ուղղեց ներկաներուն: Ան ըսաւ, թէ ՀՄԸՄ-ը եղաւ Ցեղասպանութեանէն ետք վերապրումի մեր կամքը մարմնաւորող այն կենսունակ միութիւնը, որ հազարաւորներու կամքերը դարբնեց եւ միաքերը կոփեց:

Բանակումի փակում եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին այցելութիւն

Շաբաթ, 28 Յուլիսի երեկոյեան պաշտօնական հանդիսութեամբ մը Բիւրականի մէջ իր աւարտին հասաւ համա-ՀՄԸՄ-ական 11-րդ բանակումը, որուն ներկայ գտնուեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը:



Դրօշներու Փոխանցում

Համա-ՀՄԸՄ-ական բանակումի փակման առընթեր, ՀՄԸՄ-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն աւարտը կատարուեցաւ խորհրդանշական հանդիսութեամբ մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 28 Յուլիսի կէսօրէ առաջ ժամը 11:00–ին, Միժեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան յուշարձանին մօտ, ուր հանդիսաւորապէս վար առնուեցան 10 օր շարունակ ծածանած Ետաբլուրն ու ՀՄԸՄ-ի դրօշները:

Յաղթանակի Ճաշկերոյթ–Պարահանդէս

29 Յուլիսի երեկոյեան, «Փարաւոն» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ–պարահանդէս՝ հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան եւ կազմակերպութեամբ ՀՄԸՄ–ՀԱՍԿ-ի վարչութեան:

Ճաշկերոյթին մասնակցեցան 2000 ՀՄԸՄ-ականներ եւ ՀՄԸՄ-ի համակիրներ:



Մերի Դաշնագիրը Եւ Նոր Հայաստանը

Հանրայայտ պատմաքաղաքական իրողութիւն է, որ 1920-ին Սեւրի վեհաժողովը տեղի կ'ունենար միջազգային թէ շրջանային առումով չափազանց հակասական, տարաբնոյթ եւ քաղաքական խառնաշփոթ կազմութիւններու լոյսին տակ:

Մէկ կողմէ Ա. Աշխարհամարտի դաժան պայմանները, միւս կողմէ՝ 1917-ի հոկտեմբերին այլեւս անկանխատեսելի քաղաքականութիւններու երկիր դարձած Ռուսիոյ մէջ պոլշեւիկեան յեղաշրջումը, որ ամբողջ տարածաշրջանը կը մատնէր դժնդակ կացութեան:

Ա. Աշխարհամարտը կը հասնէր իր աւարտին, պարտուած Թուրքիան ենթակայ էր մեծերու դատավճիռին:

1918 հոկտեմբերին երիտթրքական կառավարութիւնը հրաժարեցաւ: Լուծուեցաւ երկիրը ղեկավարող Միութիւն եւ յառաջդիմութիւն կուսակցութիւնը:

Նոյեմբերի սկիզբը դաշնակիցներուն եւ Թուրքիոյ միջեւ կնքուեցաւ Մուսուրսի գինադադարը:

Թրքական բանակները քաշուեցան անդրկովկասեան տարածաշրջանէն:

Փաստօրէն Ա. Աշխարհամարտը իր աւարտին կը հասնի դաշնակիցներու յաղթանակով եւ Թուրքիոյ պարտութեամբ:

Խաղաղութեան եւ հաշտութեան համաժողովը տեղի կ'ունենայ ուրեմն Փարիզի արուարձաններէն Սեւրի մէջ: Դաշնագիրի ստորագրութեան կը մասնակցին՝ Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Ճափոն, Պիւճիքա, Յունաստան, բոլորը: Պաշտօնապէս կը հրաւիրուի Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ Աւետիս Ահարոնեանի: Ներկայ կ'ըլլան օսմանեան Թուրքիոյ իթթիհատական կառավարութեան ներկայացուցիչները:

Սեւրի դաշնագիրը միջազգային քաղաքական վաւերական թն թուղթն է, մեծ պետութիւններու եւ պարտուած Թուրքիոյ միջեւ կնքուած միակ փաստաթուղթը, որով պաշտօնական ճանաչում կը ստանան միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիայէն անոր ունեցած արդար ու լիիրաւ պահանջները:

Տուեալ դաշնագիրով Հայաստանի տարածքը կը դառնար 161 հազար քառակուսի քիլոմետր, ինչ որ ի վիճակի կը դարձնէր աշխարհասփիւռ հայութեան համախմբումը այդ տարածքին վրայ եւ այլ քաղաքակիրթ ազգերու կողքին կ'ապահովէր հայութեան անվտանգութիւնն ու անկաշկանդ զարգացման եւ ստեղծագործութեան շարունակութիւնը:

Արդարեւ, Հայաստանի պատուիրակութեան խնդրանքին ընդառաջելով՝ Միացեալ Նահանգներու նախագահ Վուտթօ Ուիլսոնը յանձն կ'առնէր հովանաւորել եւ իր աւարտին հասցնել այս գործը:

Սոյն դաշնագիրը ստորագրուեցաւ, եւ բոլոր դաշնակից պետութիւններու համաժողովը այսպիսով հռչակեց միացեալ, անկախ եւ ազատ Հայաստան:

Սեւրի դաշնագիրին Հայաստանի վերաբերող վեց յօդուածները հետեւեալներն են. յօդուածներ՝ 88, 89, 90, 91, 92 եւ 93:

Սակայն հիմնականին մէջ պէտք է լուսարձակի տակ բերել յօդուած 89-ը, ուր կ'ըսուի, թէ Թուրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ միւս պայմանագիր բարձր կողմերը կը հաւանին Ամերիկայի նախագահին իրաւարարութեան յանձնել էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիւսի նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանին որոշումին խնդիրը եւ ընդունելի նախագահի որոշումով Հայաստանի ծով իջնելուն եւ վերոյիջեալ սահմանին յարակից բոլոր օսմանեան հողերը զինուորապէս չէզոքացնելու մասին պատրաստուած բոլոր տրամադրութիւններուն:

Հայկական հարցին՝ Սեւրի դաշնագիրին պատմական ամէնէն մեծ ծառայութիւնը այն էր, որ աշխարհը պաշտօնապէս ճանաչեց իր հայրենիքին՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հայ ժողովուրդի իրաւաքաղաքական իրաւունքները:

Այսօր, Սեւրի դաշնագիրի ստորագրութենէն 98 տարիներ ետք, 161.000 տարածքէն մնացած է միայն Արդի Հայաստանի Հանրապետութեան 29.000 քառակուսի քիլոմետր եւ Արցախի ազատագրուած տարածքը: Այսօր Հայաստանը, 1991-էն ի վեր, վերստին ան-

կախացած է, Հայաստանի Հանրապետութիւնը վերստին միջազգային ընտանիքի լիիրաւ անդամ է՝ փոխադարձ պարտականութիւններով եւ պարտաւորութիւններով, Հայաստանը ՄԱԿ-ի անդամ է, Հայաստանը անդամ է նաեւ ՀԱՊԿ-ի, ԵԱՏՄ-ի, Եւրոխորհուրդի խորհրդարանական յանձնախումբի, ինչպէս նաեւ՝ Եւրոպական անվտանգութեան եւ համագործակցութեան Հելսինքիի 1975-ի եզրափակիչ փաստաթուղթի 10 պարբերութեան, որուն համաձայն, միջազգային ընտանիքի անդամներու միջեւ գոյութիւն ունեցող հակամարտութիւնները լուծելու համար կը թելադրէ միջազգայնօրէն ստանձնած պարտաւորութիւնները անվարան կատարել:

Հետեւեալը, Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային իրաւաքաղաքական հիմունքներով ի վիճակի է ցանկացած մէկ պահուն ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի եւ միջազգային միւս բոլոր կազմակերպութիւններուն ուղղորդութեան յանձնել, որ Թուրքիան կը խուսափի կատարել Ուիլսոնի իրաւարար վճիռով ստանձնած պարտաւորութիւնները, այսինքն՝ հայթրքական հողային եւ սահմանային խնդիրը:

Հայաստանի Հանրապետութեան միջազգային դիրքերու ամրապնդման, հզօրացման, հեղինակութեան եւ անվտանգութեան համար անհրաժեշտ է հայ-թրքական յարաբերութիւնները, սահմանային խնդիրները փոխադրել իրաւական հարթակ եւ այդ յարաբերութիւններուն մէջ գոյութիւն ունեցող բոլոր խնդիրներուն տալ իրաւաքաղաքական լուծումներ:

Պէտք է ճշդել Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները՝ մեկնելով Հայաստանի եւ համայն հայութեան անվտանգութենէն, որուն խարխիւր կը հանդիսանայ Սեւրի դաշնագրի իրաւաքաղաքական տարողութիւնը եւ ռազմաքաղաքական նշանակութիւնը:

Այդ իսկ պատճառով մենք լիայոյս ենք, որ նոր Հայաստանի իշխանութիւններու վարած արտաքին քաղաքականութեան կալուածին մէջ կարեւորագոյն հատուածներէն մէկը կը հանդիսանայ Սեւրի յղումը, Սեւրի դաշնագրի արժարժումը եւ վերակենդանացումը:

Մենք լիայոյս ենք, որ վերջերս Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցած ողջունելի քաղաքական իրադարձութիւնները եւ իշխանափոխութիւնը միանշանակ հասկնալիօրէն պիտի ծառայեն վերոնշեալ մտորումներուն. այլ խօսքով, մենք լիայոյս ենք, որ կը ծառայեն ու կը նպաստեն ազգային համախմբուածութեան եւ միասնականութեան, եւ ոչ թէ հատուածապաշտութեան եւ արտաքին միջամտութիւններու ճնշումին տակ փորձեն միջազգային որոշ կազմակերպութիւններու հիմնադրամներու ֆինանսաւորումով մեր հասարակութիւնը տարբեր շերտերու դասակարգել կամ ճեղքել, պառակտել:

Լիայոյս ըլլալով եւ ամբողջական զօրակցութիւն յայտնելով, որ նոր Հայաստանի իշխանութիւնները յաջողին իրենց առաքելութեան մէջ, առնուազն Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, տրուած ըլլալով, որ ան ուղղակի մասնակից է Հայաստանի Հանրապետութեան քաղաքական նոր իրականութեան մէջ իր երկու նախարարներով ու մարզպետներով, մենք անվերապահօրէն կողմնակից ենք Հայաստանի Հանրապետութեան մէջ ժողովրդավարութիւնը զարգացնելու, երկիրը բարեկարգելու, պետական համակարգը արդիականացնելու, փտածութեան դէմ պայքարը շարունակելու, պետական չարաչահումները եւ իւրացումները բացառելու, սակայն գուգահեռաբար կ'ակնկալենք, որ ներկայ իշխանութիւնները նոյն վճռակամութեամբ ամրապնդեն ու պաշտպանեն ազգային արժէքային համակարգը, աւանդութիւնները, պատմութիւնը, մշակոյթը, ազգային առաքելական եկեղեցին, ազգային հերոս կերպարները, որովհետեւ այդտեղ է յաճողութեան միակ գրաւականը եւ երաշխիքը:

Եւ ոչ թէ ժողովրդավարութեան եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան անունին տակ հայրենի հասարակութիւնը զիրար հակադրելով՝ ներմուծենք այնպիսի օտար բարքեր եւ արժէքներ, որոնք կրնան ջլատել, պառակտել եւ տկարացնել հասարակութիւնը, հայ ընտանիքը եւ պահանջատէր մեր ժողովուրդին արդար պատմաքաղաքական իրաւունքներու գործընթացը:

Հայաստանի Հանրապետութեան բախտորոշ քաղաքական վերջին իրադարձութիւնները ապահովաբար պիտի ծառայեն հայ ժողովուրդի եւ հայրենիքի ամբողջական վերականգնման, եւ ոչ թէ միջազգային տարբեր կազմակերպութիւններու հիմնադրամներու ֆինանսաւորումներով ծրագիրներու իրականացման: Մանաւանդ այս փուլին, երբ ամբողջ տարածաշրջանի անկայունութեան եւ պատերազմի վերսկսման սպառնալիքը առկայ է՝ ի տես մեր հարեւան ռազմատենչ Ազրպէյճանի ախորժակներուն, նկրտումներուն, սպառազինութեան եւ կատարած օրական զինադադարի խախտումներուն, ինչին դիմակայելու լաւագոյն ձեւաչափը ներազգային կայունութեան, անդորրութեան եւ համայն հայութեան միասնականութեան առկայութիւնն է:

Նոյնինքն Հայաստանի Հանրապետութեան վարչապետ պրն. Փաշինեան Պիւճիքա իր այցելութեան՝ Օթթու-ի ժողովներու եւ հանդիպումներու միջոցին կատարած իր յայտարարութիւններէն մէկուն մէջ կ'ըսէր. «Քանի որ պատերազմի վերսկսման վտանգը միշտ առկայ եղած է, եւ մենք պէտք է պատրաստ ըլլանք այդպիսի զարգացումներու»: Աւելի ուշ, տարածաշրջանի ռազմաքաղաքական լարուած իրավիճակի մասին ակնարկելով, 15 յուլիսին դարձեալ Հայաստանի վարչապետ պրն. Փաշինեան կ'ըսէր, որ՝ «պէտք է պատրաստ լինենք հակահարուած տալու»: Այս իմաստով բարացուցական են նաեւ Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարի 23 յուլիսի կատարած շարք մը յայտարարութիւնները, յատկապէս երբ կ'ըսէ. «Ապրիլեան յարձակումին բեմագրութեան կրկնութեան պարագային, հայկական կողմը կրնայ չխուսափիլ իր ամբողջ զինանոցի օգտագործման գայթակղութենէն»: Այդ իսկ պատճառով, այսօրուան գլխաւոր հրամայականը համայն հայութեան համախմբուածութիւնն է՝ ազգ, պետութիւն, իշխանութիւն, եկեղեցի, կուսակցութիւններ՝ ի խնդիր համազգային ընդհանուր ուժերու լարումին եւ համապատասխան պատրաստուածութեան:

Արդարեւ, վերջերս Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ գօտիի Արէնի գիւղի Նախիջևանի հատուածին մէջ ռազմատենչ Ազրպէյճանի զինուորական ոտնձգութիւնները իրապէս կը սպառնան ամբողջ տարածաշրջանի խաղաղութեան:

Այդ իսկ պատճառով մեր պաշտպանուածութիւնը մեր ազգային անփոխարինելի անվտանգութեան ռազմավարութեան մէջ է. հետեւեալը, ինչ կ'ուզեն՝ թող ըլլան տարածաշրջանի ռազմաքաղաքական սադրանքները, կարելորդ մենք որոշենք, թէ մենք ի՞նչ կ'ուզենք:

Այսուամենայնիւ, մենք համոզուած ենք, որ նոր Հայաստանի իշխանութիւնները, ի խնդիր Հայաստանի եւ հայութեան անվտանգութեան, այսօր ոչ միայն կտառած կը մնան արեան գնով ձեռք բերուած պատմական յաղթանակներուն՝ արցախեան հերոսական պատերազմի ընթացքին, այլեւ կը սպասենք, որ ատոնք ամբողջութեամբ գետնի վրայ Հայաստանի իշխանութիւններուն վարած ազգային քաղաքական մարտավարութեամբ եւ գործօն դերակատարութեամբ, արցախեան ռազմաճակատներու վրայ արձանագրուած յաղթանակները քաղաքական միջազգային ճանաչումով եւ արդար կարգավիճակի մը լուծումով:

Վերջապէս, Սեւրի դաշնագրին վերադառնալով, իրապէս Սեւրի արժարժումը եւ հետապնդումը կը զօրացնէ Նախիջևանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան սահմաններուն ռազմաքաղաքական դիրքերը, կը զօրացնէ տուեալ սահմաններուն եւ լեռներուն վրայ դիրքերը պահող մեր բանակայինները, ազատամարտիկներուն կորովը, տրամադրութիւնները, կը յուշէ անոնց, որ իրենք առանձին չեն այդ սրբազան իրամատներուն մէջ, այլ իրենց թիկունքը կանգնած է համայն հայութիւնը եւ նոր Հայաստանը:

Արդարեւ, անժամանցելի են Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի հետեւեալ խօսքերը. «Մենակ ենք ու պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու, թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»:

ՄԵԼԻՔ ԳԱՐԱԳԱՒՈՐԵԱՆ



ARMENIAN NATIONAL COMMITTEE of CANADA
COMITÉ NATIONAL ARMÉNIEN du CANADA

Այցելեցէք Գանատայի Հայ Դատի յանձնախումբի կայքէջը
www.anccanada.org

Amir

514 381 0037 | **514 738 3819**
 9490 Blvd. L'Acadie | Centre Rockland

Livraison Gratuite | www.restoamir.com

Assura Bien inc.
 Cabinet en assurance de dommages et de services financiers

VAHAN MATOSSIAN C.d'A.A.
 Courtier en Assurance de Dommages
 Conseiller en Sécurité Financière

Pour vos besoins en Assurance
 For your Insurance needs

(514) 903-3999 ext: 1

Հիանալի առիթ Գանատայի մեջ իրենց մասնագիտությունը կիրարկելու ըզող կամ աշխատանքի նոր առիթներ փնտռող անհատներու համար

VERDUN ADULT & CAREER CENTRE

Մատուցուած ուսումնական ծրագիրներ
 Մասնագիտական ուսման վկայականեր (DEP)

Բնակարանային եւ առելորական շենքերու շինարարական նախագիծ (ճարտարապետական գծագրութիւն)

Ջրամատակարարման եւ ջեռուցման համակարգեր

Համակարգչային սարքաւորումներու սպասարկութիւն եւ համացանցեր

Ցածկեալ մտերմամտութիւններու համար եւաբողջ
WWW.LBPCE.CA/AVACC | 514.798.0405
 Ելեմտական օգնութիւն տրամադրուած է
 Վկայականը վաներացուած է Կրթական նախարարութեան կողմէ

6050 boulevard Champlain, Verdun, QC H4H 1A5
 Tel: 514-798-0405

Նոր ասպարեզ կրնաք մուտք գործել 16 ամիսէն

STM (Micro, Micro or jobawar) Inc. 113

LBP
 Lester B. Pearson Verdun Adult and Career Centre



COLLISION CENTER - CENTRE DE COLLISION

Etablissement Tavoukdjian

6055 Pontgravé, Montreal, Quebec H4K-2E7

Tel : (514) 274-4133

Fax : (514) 904-2313

Email : info@autoralph.com



Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.
 Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
 Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
 F 450 681-5525
 proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
 Sam. et dim. : 9h à 17h
 Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչև ձեր տունը.
 Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
 Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
 այլ դեղարան. Դեղերու պատուաստում
 (vaccination) հիւանդապստի կողմէ.

Բուժական հետեւում՝
 արևան բարակութեան (INR), շնչերակային
 ճնշման (tension artérielle), արեան շաքարի
 (glycémie capillaire), արևան մաղձաճարպի
 (cholesterol), եւն.

ARMENIAN HERITAGE CELEBRATION

ԽԱՉՎԵՐԱՅԻ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ
ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

SATURDAY SEPTEMBER 8, 2018
\$25 ADMISSION

KIDS: AGE 5-10: \$10, UNDER 5: FREE
 Շաբաթ Մատաղօրինք ժամը 6:00PM
 Խրախճանք ժամը 8:00PM

SUNDAY SEPTEMBER 9, 2018
FREE ADMISSION

Կիրակի Պատարագ ժամը 11:00AM
 Հերիսայի Օրհնութիւն ժամը 1:00PM

Զամեյի Մթնոլորտ Աւստրալական Տառչ Զուրնա
 Համադամ Ծաշեր, Փոքրերու Խաղալալար

FOR HOTEL RESERVATIONS CALL:

CAMBRIDGE - Cambridge Hotel
 700 Hespler Rd. (519) 622-1505
 Discount Code: ACC

ARMENIAN COMMUNITY CENTRE
 15 INTERNATIONAL VILLAGE DR.
 CAMBRIDGE ON.
 www.armeniancentrecambridge.org

WITH ENTERTAINMENT BY:
KHOREN MOURADIAN &
ARARAD AHARONIAN



WEEKEND OF LEGENDS

GROUPE GABRIEL

Boogie Wonder Band



Ուրբաթ | Vendredi 10 août

Ouverture des portes à 19h | Admission générale 50\$

Pour les réservations de table veuillez appeler:
Nairy Yemenidjian 514-591-3627
Janine Libarian 514-262-8183

HAROUT PAMBOUKJIAN



MIRIAM BAGHDASSARIAN
the highway.

Շաբաթ | Samedi 11 août

Ouverture des portes à 17h | Admission 13+: 25\$ | Admission 12-: 10\$

Կիրակի | Dimanche 12 août

Ouverture des portes à 13h | Admission générale 10\$

TALINE & FRIENDS

ADISS HARMANDIAN



Groupe de dance
Ani de Hamazkayin
 Chorégraphie par
 Joe Avakian

Samedi et Dimanche :
 Accès illimités aux jeux avec admission



@SHKermesse @SHKermesse
 3400 Nadon, Montreal, QC

SAHAG
 SOUND & LIGHT

#SHK2018

TRIKTRAK.CA



MERCI à tous nos commanditaires




**GROUPE
GABRIEL**





Délices des cèdres
Pâtisserie Orientale



Baron Cigars



ՀՕՄ-ի «Սուր» Մասնաճիւղը
Հոգեբանական Կենտրոն



SWEDISH AUTO CENTRE



RITA BAGHDASSARIAN
Conseillère en sécurité financière



91 Pavstos Buzand Street, Yerevan, Armenia

Tel.: +374 93 588885, +374 60 488884

Mail: info@babylon.am

Website: www.babylon.am

  [Babylon.armenia](https://www.facebook.com/Babylon.armenia)

VILLAGE GREC

**CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !
KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!**

Special of the day with coffee and dessert
 Monday to Friday \$9.95 11am - 4pm
 Saturday and Sunday \$10.95 11am - 4pm

4491, boul. Samson, Chomedey, Laval
Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
 Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

WE CAN PREDICT THAT THERE'LL NEVER BE A DULL MOMENT ON THE ROAD THIS SUMMER.

TOYOTA 2018 FACTORY EVENT

Image for illustration purposes only.

COROLLA CE Automatic
 From **\$49 /week***
 60-month lease

RAV4 FWD LE
 From **\$69 /week***
 60-month lease

aeroplan GET 5,000 AEROPLAN® WHEN YOU PURCHASE A TOYOTA!

Conditions may apply. *Prices and weekly payments are estimates only. Actual amounts may vary. The displayed price includes Freight & PDI of \$1,815 towards the RAV4 FWD LE and \$1,645 for the Corolla CE, Air Conditioning Charge of \$100 if applicable and Dealer Fees of up to \$399. †Get 5,000 Aeroplan Miles with the purchase or lease of a new Toyota. For full and accurate vehicle availability and a detailed quote, please contact Toyota Gabriel St-Laurent dealer.

TOYOTA

Դիմեցէք Մեզ Բարատանեանին լաւագոյն սպասարկութեան համար

Sam Karadanalán
 Product Consultant
 Tel: 514 748-7777 Ext.: 3810
 skaradanalana@toyotagabriel.com

TOYOTA GABRIEL ST-LAURENT

3333, ch. de la Côte-de-Liesse
 Saint-Laurent, Québec, H4N 3C2
514 748-7777
 toyotagabrielstlaurent.com
« OPEN SATURDAYS »

Gift Voucher \$200*

*Upon purchase or lease of a new 2018 Toyota. Offer can be modified or cancelled at any time. Cannot be combined with another offer. No cash value. Offer expires August 31st, 2018. Contact dealer for details.



**Alarme
Trans-Canada**



- réseaux téléphonique et informatique
- systèmes de surveillance par caméras
- feu - vol - gicleurs
- accès par carte
- membre CANASA
- nous opérons notre propre central homologué ULC grade "AAA"



RBQ 1519-8252-12
mikaelian@alarmeatc.com



**(514) 274-9446
(888) 274-9446**

**SATISFACTION
GARANTIE**

Հայկական Հաստատություն

Manoir Gouin
Résidence pour aînés autonomes et semi-autonomes

À partir de **995\$** (par semaine)
Tous les repas, collations et supervision médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques dans chaque appartement

Մեկ հոս ուրախ էնք
Պրն. Իբեկեան

Պատրաստ քեզի 4 ունեան յեր ՀԱՆԳԱՏԱՆԸ ՏՈՒՐԷՆ ԵՆՐԱ:
Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

NEW DAYCARE
GARDERIE
ÉDUCATIVE-BILINGUE
TIC-TAC-TOC

CHOMEDEY

4 Branches / 10 years of experience

- Open Monday to Friday 6:30 AM to 6:30 PM & Thursdays we close at 9:30 PM
- Open weekends for our registered kids & Drop-Off Service available as well
- Pre-Kindergarten program
- Language lessons: Armenian, Italian, Greek ...
- Professional & qualified educators
- Activities: Zumba, Yoga, Music, Cooking & Scientific Experiences
- "Baby Gym" exercise room
- Fresh nutritious meals
- Secure entrances & Camera system

450-934-4466
541 Boul. Curé-Labelle, Chomedey, Laval
www.garderiechomedeytictactoc.com

LIKE US ON facebook

ՌԻՄՍԱԻՌՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ԱԷՋ



Բ. ՏԱՐԻ ԹԻ 9
ՕԳՈՍՏՈՍ
 AUGUST | AOÛT
 Year 2 | Année 2
 No. 9 - 2018

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿԻՆԸ

ԴԱՍԵՐ` ՃՇՄԱՐԻՏ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Վերափոխման տօնը Հայ եկեղեցուց Տաղաւար կոչուած հինգ մեծ տօներէն մէկն է, որ կը կատարուի Օգոստոս 15-ի մօտակայ Կիրակին: Այդ օրը Ս. Աստուածածնի երկինք փոխադրուելու յիշատակի տօնն է:


Հայոց եկեղեցին կ'ընդունի, որ Ս. Կոյս Մարիամը ծնաւ Աննայէն եւ Յովակիմէն, սակայն Սուրբ Հոգիով սրբուեցաւ եւ ժառանգ անարատ: Ս. Մարիամը յաւերժ կոյս ժառանգ ան կոյս էր նախքան յղանալը, կոյս էր յղութեան ընթացքին եւ կոյս ժառանգ յետ ծննդեան: Անոր յաւերժ կուսութիւնը շեշտուած կը գտնենք Աստուածաշունչ Մատեանի, եկեղեցուց արանդութեան, շարականներու, ինչպէս նաեւ եկեղեցական հայրերու գրութիւններուն մէջ: Այսպէս շարականներուն մէջ կը կարդանք. «Աստուածային մեծագոյն երեք խորհուրդները քու մէջդ կը տեսնուին ու կը յայտնուին, ո՛վ Աստուածածին, անսերմ յղութիւն, անարատ ծնունդ, ժառանգ անապական կուսութիւն յետ ծննդեան»: Սուրբ Գրիգոր Նիսացի Հայրապետը կ'ըսէ. «Անբիծ եւ մաքուր կոյսի կուսութեան կնիքը, չխախտուեցաւ անարատ ծննդեան ընթացքին եւ ոչ ալ կուսութիւնը այսպիսի հօգոր եւ մեծաւարձ ծնունդի արգելք եղաւ»:

Գաբրիէլ հրեշտակապետը, երբ Ս. կոյս Մարիամին աւետիս տուաւ, յղջունեց ըսելով. «Ուրախացի՛ր, շնորհալի կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է», եւ ապա աւետեց. «Սուրբ Հոգին քու վրայ պիտի իջնէ եւ բարձրեալին զօրութիւնը քու վրայ պիտի հանգչի: Ուստի, ծնելիք զաւակդ սուրբ է եւ Աստուծոյ Որդի պիտի կոչուի»: Ահաւասիկ նման խօսք մը կու գայ Ս. Կոյսի ալեկոծուած եւ մաքուր սիրտը խաղաղեցնելու, որովհետեւ ան ըսած էր. «Ասիկա ինչպէ՛ ս կարելի է, երբամուսնացած չեմ»:



Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք, թէ ինչպէս Եղիսաբէթը Յովհաննէս Մկրտիչի մայրը Մարիամին տեսնելով կ'ողջունէ. «Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջ մայրը ինծի կ'այցելէ»: Ահա թէ ինչպէ՛ ս Աւետարանները կը վկայեն, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է եւ եթէ կը հաւատանք, որ Քրիստոս Սուրբ Երրորդութեան դէմքերէն մէկն է եւ Աստուծոյ Որդի, ուրեմն, Ս. Մարիամը կը դառնայ Աստուածամայր կամ Աստուածածին:

Հիմք ունենալով Հայ եկեղեցուց շարականները եւ Ս. Հայրերու ուսուցումները, Փրկչին համբարձումէն 15 տարի անց, Ս. Կոյսը կը վախճանի Երուսաղէմ: «Երկնային զօրութիւններով եւ հրեղէն կառքերով Փրկիչը կ'իջնէ զԱյն առնելու»: Առաքեալները, բացի Բարթողիմէոսէն, սաղմոսերգութեամբ եւ օրհներգութեամբ կը կատարեն թաղումը եւ Անոր մարմինը կ'ամփոփեն Գեթսեմանիի ձորին մէջ, յատուկ տեղ մը: Երեք օր յետոյ Բարթողիմէոս առաքեալը կը վերադառնայ եւ կ'ուզէ անձամբ այցելել Կոյսին գերեզմանը: Երբ կը բանան գերեզմանը, անիկա թափուր կը գտնեն: Յիսուս Իր խոստումին համաձայն երկինք փոխադրած էր Տիրամայրը: Դարձեալ շարականագիր վարդապետներու վկայութեամբ, «Անոր, որ վերցուց նախամօր յանցանքներու երկունքը եւ մարմնով ծնաւ Քեզ՝ Միածին Որդիդ, այսօր մեր մէջէն վերին զօրքերու մէջ փոխադրեցիր, որ միշտ իբր բարեխօս ունինք Քու առջեւդ, ո՛վ մեր հայրերու Աստուածը»: Այսպէս Ս. կոյս Մարիամը երկինք փոխադրուեցաւ, ժառանգ յաւերժի կոյսը, Աստուածածինը, բարեխօսը եւ կանանց մէջ ամենէն օրհնեալը:



ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
 Երանի՛ եւ երիցս երանի անոր, որ ժուժկալ է, քանզի ժուժկալութիւնը էապէս մեծ առաքինութիւն է: Մակայն լսեցէք, թէ այն ինչի վրայ է որ կը տարածուի, ինչի մէջ է, որ կը գնահատուի, ինչի մէջ է, որ կը պահանջուի:

Այսպէս՝ կայ լեզուի ժուժկալութիւն. այսինքն՝ շատ չխօսիլ եւ դատարկ բաներ չխօսիլ տիրապետել լեզուին, խօսքով չվիրաւորել, երդում չընել, չդատարկաբանել բանի մը մասին, որ հարկաւոր չէ, զիրար չզրպարտել, չբամբասել եղբօրը, գաղտնիքներ չբանալ, չզբաղիլ այն բանով, որ մերը չէ:

Կայ նաեւ լսողութեան ժուժկալութիւն, այսինքն՝ տիրապետել լսողութեան եւ դատարկ ըսի- ըսանքներուն ուշադրութիւն չդարձնել:

Կայ տեսողութեան ժուժկալութիւն, այսինքն՝ տիրապետել տեսողութեան, հայեացքը չդարձնել կամ ուշադիր չնայիլ բոլոր հաճելի բաներուն կամ որեւէ անպարկեշտ բանի:

Կայ դիրագրգոյթեան ժուժկալութիւն, այսինքն՝ տիրապետել բարկութեան եւ ակնթարթօրէն չբորբոքիլ:

Կայ փառքի ժուժկալութիւն՝ այսինքն տիրապետել սեփական ոգիին, չտենչալ փառաբանութիւն, փառք չփնտռել, մեծամիտ չըլլալ, պատուաւոր կոչումներ չփնտռել, չգոռոզանալ, չերագել գովասանքի մասին:

Կայ խորհուրդներու ժուժկալութիւն՝ այսինքն Աստուծոյ երկիւղով արմատախիլ ընել զանոնք, չտարուիլ գայթակղութիւն եւ իրայրը յարուցող խորհուրդներով, եւ հաճոյք չստանալ անոնցմէ:

Շար. 1 *Եփրեմ Ասորի*

ՀՈԳԵԻՈՐ

ԱՍՏՈՒԱՍՏԱՄԱՅՐՆ ՈՒ ՅԻՄՈՒՒՍԸ

Աստուածամօր մասին ունինք կարգ մը տեղեկութիւններ՝ յիշատակուած աւետարաններուն մէջ, որոնք կը վկայեն անոր միշտ Յիսուսի հետ եղած ըլլալու մասին: Մանուկ Յիսուսի մայրը՝ Մարիամ, իր զաւակին ծնունդէն մինչեւ խաչելութիւն, թաղում եւ յարութիւն, անբաժան եղած է Անկէ:

Օտունդէն ետք, զինք կը տեսնենք Յիսուսի Անուանակոչութեան, նոյնպէս քառասնօրեայ տաճար ընծայման առիթներով:

Յովսէփ եւ Մարիամ, առաջնորդուած երկնային պատգամէ, փախուստ կու տան Եգիպտոս՝ փրկելու համար իրենց զաւակը Հերովդէս արքայի Բեթղեէմի մանուկներու ջարդէն: Հերովդէսի մահէն ետք սուրբ ընտանիքը կը հաստատուի Նազարէթի մէջ, ուր մայրական խնամքով ու գուրգուրանքով Յիսուս կ'անցընէ իր մանկութիւնը:

Յիշատակութեան արժանի է «կորուած» մանուկ Յիսուսին երեք օր ետք Երուսաղէմի տաճարին մէջ գտնուիլը և տագնապահար Մարիամի խօսքը. «Այս ի՛նչ ըրիք մեզի, տղա ս. ահա հայրդ ու ես տակնուվրայ եղած՝ քեզ կը փնտռէինք»:

Կանայի հարսանիքի ընթացքին պատահածը նշանակալից դրուագ է, որով բացայայտօրէն ցոյց կը տրուի Աստուածամօր եւ Յիսուսի միջեւ գոյութիւն ունեցող սերտ կապը, յատկապէս մօր՝ իր Որդւոյն նկատմամբ ունեցած խոր համոզումը, որ իր զաւակը օժտուած է անկարելին կարելի դարձնող գերբնական կարողութեամբ:

Շար.

Ի՞նչ է ԿՐՕՆԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ



ՔՐԻՍՏՈՍԷԿԱՆ

Կրօնական զգացումի ծագումը սերտորեն առնչուած է կրօնի ծագման գաղափարին հետ: Այս վերջին հարիւրամեակի ընթացքին բազմաթիւ ուսումնասիրութիւններ կատարուեցան եւ տեսութիւններ արտայայտուեցան կրօնի ծագման մասին:

Ուսումնասիրութիւն կատարողները այցելութիւններ տուին նախնական շրջանի մտայնութիւններով ապրող համայնքներուն ու ցեղերուն, եւ տեղւոյն վրայ ուսումնասիրեցին անոնց կենցաղն ու տոհմիկ նկարագիրը, ասանդութիւններն ու սովորութիւնները եւ այս կերպով ազգագրական, հասարակական եւ մշակութային բազմաթիւ աշխատասիրութիւններ հրատարակեցին: Ուսումնասիրուեցան նաեւ նախնական եւ յետաճառ ժողովուրդներու կրօնները, եւ առաջին իսկ առիթով, ինչպէս անցեալի ուսումնասիրողները, իրենք եւս վկայեցին, որ կրօնքը համամարդկային երեւոյթ է, կրօնքի ծագումն ու զգացումը մարդկութեան չափ հին է, եւ որ բոլոր ժամանակներուն, նախնադարեան ժամանակներէն ի վեր, գոյութիւն ունեցած է կրօնական զգացումը: Անկարելի է երեւակայել որեւէ մէկ ժամանակաշրջանի մարդկային հաւաքականութիւն առանց կրօնական զգացումի ու երեւոյթներու: Նախնադարեան շրջանէն պեղումների միջոցով յայտնաբերուած իրերու մեծագոյն մասն այլ կրօնքի եւ հաւատալիքներու հետ կապ ունի: Մարդկային կեանքէն անբաժանելի տարր եղած է կրօնքը:

Կրօնքը ունեցած է նաեւ իր զարգացման պատմութիւնը: Նախնական շրջաններուն կրօնական հաւատալիքներու հարցով մարդիկ հետեւած են բնութեան օրէնքներուն եւ ըստ այնմ ստեղծած են պաշտամունք:

Հնագոյն շրջաններուն գոյութիւն ունեցած են մեռելներու պաշտամունքը եւ այս կերպով երեւակայած են նաեւ բարի ու չար ոգիներ: Այնուհետեւ մարդոց մէջ առաջացած է բնութեան տարրերու հանդէպ պաշտամունքը, յատկապէս երկնային մարմիններու պաշտամունքը. պաշտած են արեւն ու լուսինը, ինչպէս նաեւ այլ մոլորակներ, որոնց մէջ մեծ տարածում ստացած է արեւի պաշտամունքը: Պաշտած են նաեւ բնութեան մէջ գոյութիւն ունեցող այլ երեւոյթներ ամպրոպը, կայծակը, փոթորիկը: Պաշտամունքի առարկայ դարձած են նաեւ ջուրերը, լեռները, գետերը, ծառերը եւ այլն: Նուիրական գաղափարներ եւս պաշտուած են այլազան ժողովուրդներու մօտ, եւ անոնց համապատասխան աստուածութիւններ ստեղծուած են, եւ այսպէս յառաջ եկած են սիրոյ, գեղեցկութեան, պատերազմի, ուժի եւ պտղաբերութեան աստուածները, որոնք այժմ հեթանոսութեան եւ դիցաբանութեան մաս կը կազմեն:

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆԸ



ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ

Օգոստոս ամիսը, իւրայատուկ նշանակութիւն ունի Հայ առաքելական սուրբ եկեղեցւոյ հոգեւորականներուն, սպասաւորներուն եւ հաւատացեալներուն համար: Մեր Տիրոջ մօր Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնն է: Ամբողջ ամիս մը սուրբ կոյսին նուիրուած շարականներով ու աղօթքներով կը պատրաստուինք դիմաւորելու Սուրբ Աստուածամօր Վերափոխման տօնը:

Օգոստոսին կայ այլ կարեւոր տօն մը եւս, որուն մասին հաւանաբար շատեր տեղեակ չեն. Սուրբ Աստուածամօր ծնողքին Սուրբ Յովակիմին եւ Աննային տօնը: Ինչ որ գիտենք իրենց մասին աւանդութեամբ եւ երկրորդական (պարականոն) գիրքերու ճամբով գիտենք, նկատի ունենալով որ աւետարաններուն մէջ ոչինչ գրուած է այդ մասին:

Հրեաներու Դաւիթի ցեղէն Յովակիմը՝ բարեպաշտ էր եւ մեծահարուստ էր, իսկ քահանայական ցեղէն Աննան՝ համեստ ու երկիւղած. աստուածավախ գոյգ մը, որ կ'ապրէր Նազարէթ քաղաքին մէջ. ամուլ էր Աննան, ուստի չէր կրնար զուակ ունենալ. Իսկ այդ ժամանակ անզուակութիւնը մեծ նախատիք էր հրեաներուն մօտ:

Աւանդութիւնը կըսէ, թէ երբ օր մը Յովակիմ նուէր պիտի մատուցանէր Աստուծոյ տաճարին, հրեայ քահանան զինք կը նախատէ իր անզուակութեան պատճառով. ան արցունքոտ լեռ կը բարձրանայ ու կը նուիրուի աղօթքի ու ծումապահութեան. Աննան լսելով տաճարին մէջ պատահածին մասին, ինք եւս կը սկսի աղօթքի Աստուծոյ բարեգթութիւնը խնդրելով. անոնք կ'ուխտեն զուակ ունենալու պարագային, զուակը նուիրել Աստուծոյ:

Իրենց աղօթքը լսելի կը դառնայ եւ Գաբրիէլ հրեշտակապետը կը փոխանցէ աւետիսը: Երբ մանուկը կը ծնի զայն Մարիամ, այինսքն «լուսաւոր» կը կոչեն: Երեք տարի վերջ իրենց ուխտին համաձայն մանուկը կը նուիրեն տաճարին: Ըստ աւանդութեան, Յովակիմը մի քանի տարի ետք կը մահանայ, իսկ Աննան կ'ապրի այնքան որ կը տեսնէ իր թոռը Յիսուսը:

Գաբրիէլի Վրդ. Շիրումեան
Հոգեւոր Հովիւ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ



ՆՎԱԿՈՐԻՉ

ԾՆՈՂԱԿԱՆ ԱՂՕԹԸ

Ապիկելյ Վէն Պիւրրն անունով լրագրող մը հեղինակած է «Օտողքին Աղօթքը» ձեռնարկ մը, որ կը շեշտէ զուակներ մեծցնելու գործնական կողմը:

Ան այսպէս գրած է: «Ո՛վ երկնաւոր Հայր, զիս աւելի լաւ ծնողք մը ըրէ: Մորվեցուր ինձի հասկնալ զուակներս, որ համբերութեամբ իրենց մտիկ ընեմ, թէ ինչ ունին ըսելիք, որպէսզի ազնուութեամբ պատասխանեմ իրենց հարցումներուն: Զիս ետ պահէ զիրենք ընդմիջելէ կամ իրենց հակառակելէ: Ինչ քաղաքավար վարուելակերպ որ իրենցմէ կ'ակնկալեմ, նոյնը իրենց ցոյց տամ: Արգիլէ զիս իրենց սխալներուն վրայ խնդայլ եւ կամ զիրենք պախարակելէ, երբ չուզածս կ'ընեն: Երբեք զիրենք չպատժեմ անձս գոհացնելու կամ կամքս բանեցնելու համար: Մի՛ ձգէր որ զայրակս գողնալու կամ ստելու փորձութեան մղեմ: Ուղղէ զիս ամէն ժամ, որ կարենամ ցոյց տալ թէ անկեղծութիւնը ուրախութիւն կը յորդեցնէ:

«Կ'աղօթեմ որ իմ մէջս չարասրտութիւնը մարես, որ երբ բարկանամ, կարենամ լեզուս զսպել: Միշտ յիշեմ, որ զուակներս պզտիկներ են, եւ իրենցմէ չափահասի վարուելակերպ չակնկալեմ»:

«Մի՛ ձգէր որ անհամբեր ըլլամ եւ զիրենք զրկեմ որոշումներ առնելէ: Օրհնէ զիս, որ ունենամ մեծասրտութիւն, տալու ամէն գործնական բան, գոր կը խնդրեն եւ քաջութիւն մերժելու ամէն փաստակար բան, գոր կ'ուզեն»:

«Զիս ըրէ արդար եւ ազնիւ: Ո՛վ Տէր, զիս դարձուր այնպիսին, որ ըլլամ սիրուած եւ յարգուած, ինչպէս նաեւ օրինակելի անձ զուակներուս համար»:

Սիրելիներ,

Այսօր մեր զուակները որքան պէտք ունին այս տեսակ աղօթող ծնողներու: Եթէ մենք, իբրեւ ծնողներ Աստուծոյ հանդէպ սիրով չլեցուինք, ուրե՞ս պիտի չկարենանք գոհաբերութեան հոգին մեր մէջ աճեցնել, ըլլալ աղօթասէր, գոհունակ, եռանդուն Աստուծոյ հանդէպ, գործելու փափաք ունեցողներ, պիտի չունենանք յօժարակամութիւն, մաքրութիւն, քաջութիւն, խաղաղասիրութիւն: Հաւատքով լեցուինք, հաւատքով ըլլանք, որպէսզի համբերութեամբ դաստիարակենք մեր զուակները, եւ Տէրը մեր զուակներուն մէջ թող գետեղէ հոգի մը, որ Իրեն կը յարի:

Հրահաստ

ԱՂՕԹԸ



Քեզի՝ միամօղ եւ կոյսիղ կը պաղատինք, խնդրելով Քեզմէ որ անդադար բարեխօսես Քու Որդիիդ եւ մեր Աստուծոյն, որ մեզ փրկէ փորձութենէ եւ մեր բոլոր վտանգներէն. Ամէն:



ՌԻՄԱԿՈՐԻՉ

MESSAGE DU PRÉLAT

La femme la plus sacrée

L'Assomption est une des cinq fêtes de l'Église arménienne et a lieu le dimanche le plus proche du quinze août. L'on célèbre alors la montée au ciel de la Mère de Dieu.

L'Église arménienne croit que la Sainte Vierge Marie est née d'Anne et de Joachim, mais que le Saint-Esprit l'a purifiée, la rendant immaculée. Marie est donc restée vierge : elle l'était avant, durant et après sa grossesse. Sa virginité perpétuelle est soulignée dans la Bible, les traditions de l'église, les chants liturgiques ainsi que les écrits de nos pères saints. Ainsi on peut lire dans les chants liturgiques : « Les trois sacrements divins sont retrouvés et révélés en vous, ô Mère de Dieu, par une grossesse stérile et une naissance immaculée, demeurant dans une virginité chaste par la suite. » Grégoire de Nyssa a dit : « Le sceau de la virginité pure et chaste n'a pas été rompu lors de la naissance immaculée, et sa virginité n'était pas un obstacle à une naissance aussi grande et miraculeuse. »

Lors de l'Annonciation, l'archange Gabriel salua la Sainte Vierge en disant : « Je te salue, toi à qui une grâce a été faite; le Seigneur est avec toi. » Puis il déclara : « Le Saint-Esprit viendra sur toi, et la puissance du Très-Haut te couvrira de son ombre. C'est pourquoi le saint enfant qui naîtra de toi sera appelé Fils de Dieu. » Cette réponse était nécessaire, car à l'Annonciation le cœur pur de la Vierge s'était troublé et elle avait dit à l'ange : « Comment cela se fera-t-il, puisque je ne connais point d'homme? »

Dans l'Évangile selon Luc, on peut lire comment Élisabeth, la mère de Saint-Jean-Baptiste, s'écria en voyant Marie : « Comment m'est-il accordé que la mère de mon Seigneur vienne auprès de moi? » C'est ainsi que les Évangiles témoignent de l'ascendance divine de Jésus, et c'est pourquoi nous croyons que le Christ est un des visages de la Sainte Trinité et le fils de Dieu. Marie est donc celle qui a enfanté Dieu, ou la Mère de Dieu.

Se basant sur la liturgie et les écrits des saints pères de l'Église arménienne, quinze ans après l'Ascension du Sauveur, la Sainte Vierge décède à Jérusalem. « Avec les forces célestes et des calèches de feu, le Sauveur est descendu pour la reprendre. » Les apôtres, à l'exception de Barthélemy, organisent ses funérailles avec des psaumes et des bénédictions, et scellent son corps dans la vallée Cédron. Trois jours plus tard, Barthélemy, revenu de voyage, veut lui-même rendre visite à la tombe. Mais quand ils ouvrent celle-ci, ils voient qu'elle est vide. Jésus avait gardé sa promesse en la montant au ciel. Nos pères saints en témoignent de nouveau : « Elle, qui a pris sur elle les péchés et les agnies de la création en vous donnant votre Fils unique, a été prise de nous vers de plus grandes forces... afin que nous puissions toujours avoir une médiatrice devant vous, ô Dieu de nos pères. » Ainsi, la Vierge Marie, la vierge perpétuelle, la médiatrice bénie entre les femmes, est entrée dans la gloire de Dieu.

WESTERN ONES, WESTERN CHURCHES

The Holiest Woman

The Assumption is one of the Armenian Church's five Tabernacle (Daghavar) Feasts. It takes place on the Sunday closest to August 15. This day celebrates the Mother of God's ascension to heaven.

The Armenian Church believes that the Virgin Mary was born to Anne and Joachim, but was blessed by the Holy Spirit and became immaculate. St. Mary is thus forever a virgin: she was a virgin before, during, and after her pregnancy. We find the emphasis on her virginity in the Bible, in our church's Tradition, our liturgical songs, and our ecclesiastical forefathers' written works. And so we can hear in our liturgical songs, "The three divine sacraments can all be found and be revealed within you, O Mother of God. A sterile pregnancy, an immaculate birth, remaining in chaste virginity thereafter." Saint Gregory of Nyssa said, "The seal of pure and chaste virginity was not broken during the immaculate birth, nor was her virginity an obstacle to such a great and miraculous birth."

When the angel Gabriel appeared to Mary during the Annunciation, he saluted her by saying, "Hail, thou that art highly favoured, the Lord is with thee." And upon the Annunciation he declared, "The Holy Spirit shall come upon thee, and the power of the Highest shall overshadow thee: therefore also that holy thing which shall be born of thee shall be called the Son of God." This is said to her, for in her pure heart she had been so troubled as to ask, "How shall this be, seeing I know not a man?"

In the Book of Luke it is written that Elizabeth, St. John the Baptist's mother, greets Mary in saying, "And whence is this to me, that the mother of my Lord should come to me?" This is how the Scriptures bear witness to Jesus being the Lord's son. If we believe that Christ is one part of the Holy Trinity and God's son, then Mary is the God-bearer, or the Mother of God.

Based on the Armenian Church's liturgical songs and our holy fathers' teachings, 15 years after the Saviour's ascension, the Blessed Virgin passed away in Jerusalem. "With heavenly forces and fiery carriages the Saviour descends to take her." With psalms and blessings, the apostles, except for Bartholomew, carried out her funeral and sealed her in the Kidron Valley. Three days later, the apostle Bartholomew returned and wished to visit the Virgin's tomb. When they opened the tomb, they found it empty. Jesus, in keeping with his promise, had moved her. Our liturgy-writing fathers bear once again witness to this. "She, who took upon the sins and the throes of childbearing and gave you your only begotten Son, has been moved from us to greater forces... so that we may always have an intercessor before you, O God of our fathers." And so Virgin Mary was assumed into Heaven, remaining an ever-virgin, the Bearer of our Lord, our intercessor, and blessed among all women.

FREEDOM

There's another aspect of freedom as well. As the renowned philosopher and social critic Os Guinness puts it, there is negative and positive freedom. By negative, he means freedom FROM something, and by positive, he means freedom FOR something. Negative freedom assumes freedom from anything that hinders you to do or be what you will. The positive is cherishing the freedom one has to do or become who he/she wants to, and which assumes a self-knowledge and a healthy self-esteem of who you are as a person.

Summarizing: freedom is an existential necessity for humans. Freedom is the basis of genuine love. Freedom can be abused or misused. Hence, freedom assumes responsibility. Freedom is the gift of God; use it wisely.

REFLECTION: What is it that you need to be free FROM? ...an addiction, a bad habit, a negative influence? Don't delay/postpone it. Prayerfully consider ways of getting rid of it (e.g. a therapist, a councillor, fasting, praying). Trust God will help you, enable you, and deliver you, because He loves you unconditionally.

What are you going to use your freedom FOR? The best way to answer this question is to meditate on who you are, and ask God to help you understand His will for your life, and then use your freedom to achieve exactly that.

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ

Շատ Չաճապարենք

Սօսիկը ճուտիկներու հալիթներէն դուրս գալուն սպասելէ ձանձրացած, որոշեց օգնել անոնց, որ շուտ դուրս գան: Ան կոտրեց բոլոր կեղեւները: Բայց աւաղ, շուտով նշմարեց թէ օդը խիստ ըլլալուն, բոլոր ճուտիկները մեռան, բացի մէկէն:


Կարօն մայրիկին վարդասարահին մէջն էր: Երբ ներս եկաւ, մայրիկը հարցուց. «Ի՞նչ կ'ընէիր»: «Օ՛հ, գեղեցիկ վարդի կոկոն մը տեսայ եւ զայն բացի». ըսաւ: Մայրիկը դուրս ելաւ եւ տեսաւ, որ վարդը փճացած էր: Եթէ Կարօն ձեռք չզարնէր, կոկոնը արեւուն տակ, ինքնիրեն պիտի բացուէր եւ շատ գեղեցիկ պիտի ըլլար: Ան փճացուց ծաղիկը շատ աճապարելով:

Աստուած միշտ չէ, որ մեր աղօթքներուն անմիջապէս կը պատասխանէ: Ան կ'ուզէ մեզի համբերութիւն եւ վստահութիւն սորվեցնել: Մենք կրնանք վստահ ըլլալ թէ՛ Ան պիտի պատասխանէ, իր յարմար սեպած ժամանակին:

Եկէ՛ք, աճապարելով պատասխանը չարգիլենք:

Following Jesus

The apostles are ready to follow Jesus. They want to learn from him and help him in his ministry. Can you help them find the right path? Mark the route. There's only one right way to go!



Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դաւանութեան եւ աւանդութեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջանքեր կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցու վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:



Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:



ՈՒՄԱՒՈՐԻՉ

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ի՞նչ է Խաչվառը կամ Թափօրի Խաչը:

Խաչվառը արծաթե կամ մետաղե շինուած մեծ խաչ մըն է ձողի մը վրայ բարձրացուած եւ երկար կտորով մը ծածկուած, որ թափօրներու առջեւէն կը քալէ, որմէ կաթնէ Թափօրի Խաչ անուանումը: Խաչվառը այսօր կը գործածուի Պատարագի խնկարկութեան, թափօրներու եւ շատ մը եկեղեցիներու մէջ անդաստաններու ժամանակ: Անցեալին Խաչվառ կը տանէին նաեւ ննջեցեալներու յուղարկաւորութեան առջեւէն, ինչ որ այսօր թէեւ կորած է այդ սովորութիւնը, սակայն կաթողիկոսներու կամ մեծ մարդոց յուղարկաւորութեանց ընթացքին գործածութեան կը դրուի:

ՊՈՕՍԽՈՒՄԷ - ՕՐԹԻ - ԱԼԷԼՈՒԻԱ - ՈՎՍԱՆՆԱ բառերուն իմաստները:

Պոսխումէ.- Յունարէն բառ մըն է, որ կը նշանակէ՝ «Ուշադրութի՛ւն ըրէք», կամ «Ուղիդ վէ՛ր նայեցէք»:

Օրթի.- Դարձեալ յունարէն բառ մըն է եւ կը նշանակէ՝ «Ակա՛նջ դրէք», կամ «Ոտքի՛ ելէք», «Ուղի՛ դ կանգնեցէք»:

Ալելուիա.- Եբրայերէն բառ մըն է, որ երեք բառերէ կազմուած է. «Ալ» կը նշանակէ՝ «Պիտի գայ», «Պիտի յայտնուի», «Էլ» կը նշանակէ՝ «Աստուած», «Ուիա» կը նշանակէ՝ «Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք զկենդանին Աստուած», ինչպէս որ Գրիգոր Տաթեւացիին կը բացատրէ:

Ալելուիան «Հրեշտակներու երգ է, որ [սուրբ Պատարագի ժամանակ] եկեղեցոյ ամբողջ բազմութիւնը մէկ առ մէկ յաջորդաբար քաղցր եղանակով կ'երգէ՝ նախքան Աւետարանի ընթերցումը, որովհետեւ Աստուած պիտի խօսի, որու համար ալ մարդիկ հրեշտակներու նման Անոր կը մատուցեն հրեշտակներու օրհնութիւնը» (Յ. Արճիշեցի):

Ովսանա.- Դարձեալ եբրայերէն բառ մըն է եւ կը նշանակէ՝ «Փրկութիւն», «Փրկութիւնը բարձունքներէն»:

Արդ, Աւետարանի ընթերցումէն առաջ երբ սարկաւազը կը յայտարարէ «Ալելուիա՛, Օրթի՛», ըսել կ'ուզէ՝ «Ոտքի՛ կեցէք, օրհնեցէ՛ք ու գովեցէ՛ք կենդանին Աստուած, որ պիտի յայտնուի Իր խօսքերով, ուստի՛ ուշադի՛ր եղէք եւ երկիւղածութեա՛ մը ուկնդրեցէք»:

Ի՞նչ է Մասը:

«Մաս» հայերէնին մէջ կը նշանակէ՝ «Բաժին»: Մասը առանց թթխմորի, թթխմորազերծ հաց է, լուսաշի նմանողութեամբ պատրաստուած, բարակ եւ կլոր առանց նուիրագործուած ըլլալու: Անցեալին սովորութիւն էր մեծ թիւով նշխարներ պատրաստել եւ Պատարագէն ետք ժողովուրդին բաժնել: Հետզհետէ այդ փոքր նշխարներու սովորութիւնը փոխանակուեցաւ մասի սովորութեան, եւ որպէսզի այս վերջինը զանազանուի նշխարներէն՝ սկսաւ մաս կոչուիլ: Մասը եկեղեցի կը բերուի որոշ քանակութեամբ եւ սուրբ եւ անմահ Պատարագէն ետք կտոր-կտոր կամ մաս առ մաս կը բաժնուի հաւատացեալներուն, մասնաւորաբար անոնց՝ որոնք այս կամ այն պատճառով Ս. Հաղորդութիւն չստացան: Կը տարուի նաեւ տուն եւ կը բաժնուի ընտանիքի այն անդամներուն՝ որոնք կարելիութիւնը չունեցան եկեղեցի գալու եւ Ս. Հաղորդութիւն ստանալու:



Մաս տուող անձը պէտք է ըսէ. «Մա եղիցի քեզ մաս եւ բաժին Սրբոյ Պատարագի», իսկ ստացող անձը՝ «Օրհնեալ է Աստուած» կամ «Բաժին իմ Աստուած յաւիտեան», այսինքն՝ Աստուած է իմ բաժինս միշտ:



ՀՈԳԵՒՈՐ ԽՕՍՔ

«Սիրելիներ, սիրենք իրար, որովհետեւ սերը Աստուծոյ պարգեւն է. ուստի ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է եւ զԱստուած կը ճանչնայ»: (Ա. Յհ 5:5)

ՃԻՇՏԸ ԳԻՏՆԱՆՔ

Խորհուրդ կը նշանակէ անտեսանելի և ծածկուած իրողութիւններ. իսկ կրօնական իմաստով՝ ծես կամ ծիսակատարութիւն, և անոնցմով անտեսանելի բաներու յայտնութիւնը: Խորհուրդներու միջոցով Աստուած եւ մարդիկ իրարու կը միանան, երբ մարդիկ աստուածային շնորհքներով կը զարդարուին: Խորհուրդները մեզ Երկնքի Թագաւորութեան նախաճաշակը կու տան, որուն ժառանգութիւնը խոստացած է մեզի մեր Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Խորհուրդը կ'ըմբռնենք հաւատքով եւ երկիւղածութեամբ: «Խորհուրդները հոգեւոր ազդակներ եւ միջոցներ են քրիստոնէականերուն համար, միշտ մնալու աստուածային շնորհքին մէջ եւ ապրելու հոգեւոր կեանքի բարձրութեան վրայ, եւ գործերով ցոյց տալու, թէ Յիսուս Քրիստոսով անտարանուած փրկութիւնը հոգեւոր իրականութիւն մը եղած է հաւատացեալներուն համար, իրենց հաւատքին ու կեանքին մէջ» (Բարգէն Կաթողիկոս, Քրիստոնէական, էջ 52):



Այժմ տեսնենք թէ, որո՞նք են եկեղեցոյ խորհուրդները

Սկրտութիւն.- Հաւատքի խորհուրդն է: Կը Հաւատանք եւ կը մկրտուինք:

Դրոշմ.- Յոյսի խորհուրդն է: Սուրբ Հոգիի զօրութեան վրայ դնելով մեր յոյսը, կրնանք դիմադրել թշնամիին Մատանային:

Ապաշխարութիւն.- Արդարութեան խորհուրդն է: Չղջումով, խոստովանութեամբ կ'արդարանանք մեր մեղքերէն:

Հաղորդութիւն.- Սիրոյ խորհուրդն է: Սիրով է, որ կը միանանք մեր գլուխը եղող Քրիստոսին՝ իբրեւ Անոր մարմնի անդամները:

Պսակ Ամուսնութեան.- Ողջախոհութեան (պարկեշտութեան) խորհուրդն է: Ողջախոհ ամուսնութեամբ կրնանք զսպել բղջախոհ (անպարկեշտ) ցանկութիւնը եւ հեռու մնալ շնութենէն եւ պոռնկութենէն ու ապրիլ ընտանեկան մաքուր կեանք մը:

Զեռնադրութիւն.- Խոհեմութեան եւ գիտութեան խորհուրդն է: Զեռնադրեալ անձը խոհեմութեամբ եւ գիտութեամբ կը վարէ իր կեանքը, կը կատարէ խորհուրդները եւ կը քարոզէ Տիրոջ պատգամները:

Կարգ հիւանդաց եւ Վերջին Օծում.- Արդարութեան լրումի խորհուրդն է: Կեանքի պատերազմէն ելլելով՝ մեռնելով, արդարներու հանգիստի ժառանգորդը կը դառնանք:

ՕԳՈՍՏՈՍ ՏՕՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍ							2018
Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի	
		1	2	3	4	5	
6	7	8	9	10	11	12	
13	14	15	16	17	18	19	
20	21	22	23	24	25	26	
27	28	29	30	31			

Օգոստոս 12
Վերափոխումն Ս. Աստուածածնի. Խաղողօրհնէք

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Հայրենիք-Սփիւոք՝ Գոր փուլի մը սկիզբը - Գ.

Այո, ինչպէ՞ս Հայրենիք-Սփիւոք յարաբերութիւններուն մէջ Սփիւոքը կրնայ իր ներուժին ամբողջ տարողութեամբ մասնակից ըլլալ Հայաստանի զարգացման ու յառաջընթացին, իսկ Հայրենիքը՝ Սփիւոքի երկարատեւ պահպանման՝ մինչեւ ամբողջական Հայաստանի ու ամբողջական հայութեան երազի իրականացումը:

Այս ըսելով՝ պէտք է մտահան ընել երկու իրողութիւններ:

Առաջին, մէկ կողմէ, նոյն այդ երազի վերապրումը, համայնավար ամբողջատիրութեան եօթ տասնամեակներուն, մենք մեծ մասամբ կը պարտինք Սփիւոքին: Փաստօրէն, այս վերջինը հանդիսացաւ հաւատարիմ պահպանը Եռագոյնին, «Մեր հայրենիք»-ին ու ՀՀ գինանշանին կամ տարբերանշանին, որոնք այդ անմար երազի խորհրդանշաններն են: Հայաստան, իր 1990-ի անկախութեան հռչակագրով վերստանձնեց անոնց տիրութիւնը:

Երկրորդ, միւս կողմէ, որքան ալ անողոր ըլլային ճնշումն ու հալածանքը բռնակալութեան կողմէ, կարելի էր, որ Հողը ինքը պահպանած չըլլար Երազը եւ սերունդէ-սերունդ հասցուցած չըլլար վերանկախացման Օրուան: Ետոյ յատկանշական է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ինքզինք բացառելով հայրենի հողին վրայ, գործածեց «վերընձիւղում» բառը եւ ոչ՝ «վերադարձ» բառը. շատ: Փակագիծի մէջ յիշենք այստեղ, ստալինեան հայրածանքներու ամենէն զարհուրելի օրերուն, դաւաճան Նայիրի Զարեանի զրպարտութիւնը դաշնակցական Ակսել Բակունցին, որ իր կուսակցութեան լուծարումը յայտարարած էր յատուկ, վերջին ժողովի մը. «Դաշնակցական լիկվիդատորների համագումարում նրա արտասանած ճառը ոչ թէ լիկվիդացիայի ճառ է, այլ քողարկուած աշխատանքի անցնելու ձեւերի հետագայ ծրագիր»: Իրապէ՞ս, թէ ոչ պարզապէս նոյնիսկ առանց կազմակերպական կառույցի, որ լուծարման կ'ենթարկուէր, Դաշնակցութեան, իմա՝ հայ ժողովուրդի Երազին անկորնչելիութեան մարտահրաւէ՛րն էր այդ, որ դաշնակցական Բակունցները, եւ ոչ միայն անոնք, այլ նոյնիսկ համայնավար Խանջեաններն ու իրենց յաջորդները մինչեւ 1991 սեպտեմբեր 21 հասցնէին այդ Երազը վառ պահելու յանձնառութիւնը:

Ուրեմն այդ ժամանակաշրջանին Սփիւոքը լիովին կատարեց իր դերը, իսկ Հայրենիքը ինքզինք կերտեց իրեն արտօնուած ամենէն դժուարին ու ամենէն դժխեմ պայմաններուն իսկ մէջ:

Այսօր, վերանկախացումէն ալ աւելի քան քառորդ դար ետք, յատկապէս Հայաստանի ներքին նոր իրավիճակին դէմ-յանդիման, մենք պարտաւոր ենք վերաքննելու մեր՝ Սփիւոքի, դերն ու դերակատարութիւնը եւ որոնելու գայն ամենէն արդիւնաւէտ կերպով իրագործելու միջոցները:

Դարձեալ չմոռնանք երկու իրողութիւն: Առաջին՝ Հայաստանը՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Արցախի Հանրապետութիւնը պետական կառույցներ են, իրենց սահմանադրութիւններով ու վարչական կազմակերպութիւններով, ոտքի տակի հողով ու անոր վրայ շնչող, գործող ու երկրին տաքն ու պաղը ապրող բնակչութեամբ:

Երկրորդ՝ Սփիւոքը մէկ ու միաձոյլ ամբողջութիւն մը է, չունի օրինական որեւէ հիմք: Իւրաքանչիւր գաղթօճախ մասնիկն է իր գտնուած երկրին, ենթակայ՝ անո՛ր օրէնքներուն: Օժտուած է միծ ու փոքր այլազան կազմակերպութիւններով, ոմանք զուտ տեղական կամ շրջանային առումով, ուրիշներ՝ քիչեր, եկեղեցական, կուսակցական կամ միութենական՝ «համասփիւոքեան» առումով, իրարու հետ (երբեմն) գործակցող, իրար (յաճախ) չհանդուրժող յանձնառու անդամներով ու համակիրներով եւ անոնց հակադրուող շրջանակներով... Տակերտեցի համասփիւոքեան բառը, որովհետեւ Սփիւոքն ալ կրկնակի յոգնակի պէտք է հասկնալ՝ սփիւոքներ, որոնք ոչ ամենուրեք, ոչ ալ նոյն յարմարութիւններով օժտուած գաղթօճախներ կը պարունակեն: Եւ անշուշտ բոլոր այդ կազմակերպութիւններէն դուրս մնացած, ազգային կեանքին հետ մեծ մասամբ անհաղորդ հսկայ զանգուածներ:

Իսկ ի՞նչ է Սփիւոքի գոյութեան իմաստը: Առաջին հերթին արտագաղթի հետեւանք, Մեծ եղեռնէն ալ առաջ, նոյնիսկ դարեր առաջ, երկրորդ հերթին Հայոց ցեղասպանութեան հետեւանք, եւ վերջապէս դարձեալ արտագաղթի հետեւանք, Սփիւոքը, որ այլ ժողովուրդներու սփիւոքներուն նման է՝ մաշուժի ենթակայ, եւ տարբեր է՝ հասարակաց նպատակի մը առ-

կայութեամբ, ընդգրկելով հայութեան երկու երրորդը կամ երեք քառորդը, ի՞նչ նպատակ կրնայ ունենալ՝ եթէ ոչ Հայ դատի հետապնդումը եւ Հայրենիքի հզօրացումը: Արդարեւ, ինքնանպատակ է Սփիւոքի գոյութիւնը, բացի եթէ ընդունինք, որ Համացանցի, Դիմատետրի ու ձեռնարկարանի այս դարուն ազգերն ալ կրնան առցանց գոյութիւն ունենալ միայն...

Սփիւոքը օժտել ընդհանուր մէկ կառույցով՝ խորհրդարանով կամ նման համագումարով, ըստ իս անկարելի, նոյնիսկ անհեթեթ ծրագիր է: Գիտեմ, որ կա՛ն ասոր հաւատացողներ, յարգելի ու համոզուած մարդիկ, որոնց առաջարկները կամ նոյնիսկ գործնական փորձերը տեղ չեն հասած ու չեն հասնիր: Սակայն Սփիւոքի խաղաղէտ հայութիւնը համախմբելը, Հայրենիքէն անկախ ու ինքնորոյն՝ իմաստ չունի կամ կրնայ չունենալ:

Նաեւ ոչ մէկ գործնական շահ կը տեսնեմ Հայաստանի Ազգային ժողովին մէջ Սփիւոքի պատգամաւորներ ունենալուն մէջ, նախ որովհետեւ այդ պատգամաւորները ընտրելու միջոցները չկան ու չեն կրնար ըլլալ, ինչպէս վերեւը բուռնացաւ, երկրորդ՝ որովհետեւ մէկ կամ մի քանի հոգիի հոն (խորհրդանշական) ներկայութեամբ է, որ Սփիւոքը իր բնիկները կրնայ ըսել եւ տալիքը տալ:

Հայրենիք-Սփիւոք յարաբերութիւնները բարոյական հիմք ունին, ո՛չ օրինական: Հայ ենք, այդքանով ալ մենք մեզ մեր երկրին կապուած կը զգանք (կամ չենք զգար): Նոյնիսկ երկբայաբացիութիւնը բաւարար խթան է՝ այդ կապուածութիւնը հաստատելու համար, եթէ չըլլայ միւսը՝ զգացականը:

Ի՞նչ ընել ուրեմն, ինչպէ՞ս ընել, որ Սփիւոքը, թէ՛ մարդկային (մտային), թէ՛ տնտեսական իր ամբողջական ներուժով, նպաստէ Հայրենիքի հզօրացման, որ իր գաւակները գործնական մասնակցութիւն ունենան հայրենի կեանքին, այդպիսով թէ՛ ծառայելով այդ նպատակին, թէ՛ ալ ապահովելով Սփիւոքի գոյատեւումը որքան երկար ժամանակ որ պէտք է:

Այս մասին ալ՝ յաջորդիւ: **ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ**
(շար. 3 եւ վերջը յաջորդիւ)

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիւէ Անթիլիաս Փոխադրութիւնը

«ԱՆՆՆՆ ՈՃԻՐԸ»

1. Բ

Սուլթանը «բարենորոգմանց հարց»ին իր պատասխանը տուած էր համատարած ջարդերով: Անկէ ետք՝ մինչեւ Պալքանեան պատերազմ, որ Թուրքիոյ ծանր պարտութեամբ էր աւարտած, հայութիւնը մեծ տէրութիւններու գիւնագրիտական դռները թակելու ճիգերէն հրաժարած էր: Սուլթանին ժամանակ՝ ստակումէն: Իսկ Իթիհատականներուն իշխանութեան գալով՝ խոստումէն, թէ իրենց «գլխաւոր մտահոգութիւն»ն էր հայոց ակնկալութիւնները գոհացնել «համա-օսմանեան բարենորոգումներ»ու ծրագրով մը⁸²⁹: Հայութիւնը բերկրանքով ողջունած էր Օսմանեան Սահմանադրութեան վերահռչակումը, եւ լծուած «խալամ դրացիներու հետ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրութեան յառաջդիմութեան եւ բարօրութեան»⁸³⁰: Իթիհատականները յաջողած էին հաստատել «կուսակցական դիկտատորութիւն», եւ իւրացուցած վատթարագոյն ազգայնականութեան հաւատամքը, ձգտելով «բոլոր այլազան ցեղերը օսմանցիւթեան մէջ» լուծել ու ստեղծել «Օսմանեան Կայսրութեանն ոչ միայն մէկ պետութիւն, այլեւ մէկ ազգ»⁸³¹: Այդ հաւատամքէն եւ ձգտումէն շատ հեռու էր կրնար ըլլալ որեւէ իրաւունքի եւ արդարութեան հետամուտ փոքրամասնութեան մը բնաջնջումը:

Եւ այն կացութիւնը բառնալու համար, հայութեան կողմէ միաժամանակ երկու քայլեր առնուած էին. մէկը Կ. Պոլսոյ մէջ, միւսը՝ Թիֆլիսի:

Նախ՝ Թիֆլիսի քայլը: 1912-ի վերջաւորութեան, Թիֆլիսի մէջ գումարուած էր խորհրդակցական ժողով մը (Նոյեմբեր), եւ ապա՝ Համագումար մը (Դեկտեմբեր): Խորհրդակցական ժողովը կայացած էր մասնակցութեամբ Թիֆլիսէն, Պաքուէն, Երեւանէն, Ախալցխայէն, Նոր Նախիջևանէն, Արմաւիրէն, Պաթումէն ու այլ տեղերէ ներկայացուցիչներով: Որոշուած էր 1.- Կազմակերպել աւելի լայն կազմով համագումար մը, ըստ կարելոյն՝ բոլոր հայաբնակ կարեւոր վայրերու ներկայացուցիչներով, եւ ընտրելու լիազօր մարմին մը, որ Հայկական Հարցով զբաղէր: Եւ 2.- Դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրել, որ ան յանուն հայութեան Յարին օգնութիւնը հայցէր Թուրքիոյ հայութեան համար⁸³²: Համագումարը կայացած էր մասնակցութեամբ Թիֆլիսէն, Պաքուէն, Նոր-Պայազետէն, Պաթումէն, Հաշտարխանէն, Հին Նա-

խիջեւանէն, Շուշիէն ներկայացուցիչներու, եւ յանգած հետեւեալ որոշումներուն. յանձնարարել ընտրուելիք լիազօր մարմինն՝ 1.- Օժանդակել Կաթողիկոսին՝ Հայկական Հարցին համար անոր գործունէութեան մէջ. 2.- Կապեր հաստատել Կ. Պոլսոյ, Փարիզի եւ այլ վայրերու հայկական մարմիններու հետ, որոնք նոյն հարցով զբաղելու նպատակ ունին. եւ 3.- Բարոցութեան միջոցով Հայկական Հարցին հանդէպ նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել ուսու հասարակութեան եւ վարիչ շրջանակներու մէջ⁸³³:

Կաթողիկոսը արդէն 10 Նոյեմբեր 1912 թուակիր Կոնդակով Պօղոս Նուպարի պաշտօն տուած էր եւրոպական պետութիւններուն մօտ պաշտպանել Հայկական Հարցը: Հայ Բարեգործական Միութեան հիմնադիրը՝ այսպէս կոչուած էր ըլլալու նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան:

Եւ՝ Կ. Պոլսոյ քայլը: Պատրիարքութիւնը Կառավարութեան յղած էր ընդարձակ յուշագիր մը, որ թուած էր 1908-1912-ի միջոցին տեղի ունեցած հարստահարութիւնները, հողային յափշտակութիւնները, տեղական իշխանութիւններու դիտաւորեալ անտարբերութիւնն ու արգելքները եւ, մանաւանդ Կառավարութեան անբացատրելի վերաբերմունքը մինչ այդ կատարուած բոլոր դիմումներուն եւ բողոքներուն նկատմամբ⁸³⁴: Յուշագրի անպատասխան մնալուն վրայ, 1912-ի Դեկտեմբերին, Ազգային ժողովը սպառած գտած էր «բոլոր միջոցներ»ը, եւ առաջադրած էր «նորէն միջազգային սեղանի վրայ հանել Հայկական Հարցը»⁸³⁵: Եւ դիմած էր Կեդրոնական Վարչութեան, ու անոր ուղեգրի յանձնարարած: Ընտրուած էր քաղաքական մարմին մը՝ «Ապահովութեան Յանձնաժողով» անուամբ, ու անոր տրուած էին լայն իրաւասութիւններ՝ կատարելու համար արտաքին բանակցութիւններ, մշակելու բարենորոգումներու ծրագիր եւ հետապնդելու անոնց իրագործումը: Այս մարմինը հազիւ ընտրուած՝ լուր էր առած, թէ Թիֆլիսի եւ Մոսկուայի «առաջաւոր մտաւորականութիւնը» արդէն խորհրդակցութիւններ կ'ունենար ուսու կառավարութեան եւ Կովկասեան փոխարքայութեան հետ՝ «Թուսաստանի հովանաւորութիւնը խնդրելու Հայկական Բարենորոգումներուն վերաբերմամբ, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ Կովկասեան փոխարքային միջոցով յուշագիր մը յանձնուած էր Յարին, խնդրելով որ

ան ստանձնէ նախաձեռնութիւնը Հայկական Հարցի լուծման»⁸³⁶: Վահան Փափագեան, որ յանձնաժողովին անդամներէն մէկն էր, գրած է. «Անակնկալ էր մեր ուսուսահայ եղբայրներու այս քայլը (...) Էջմիածինը ընդառաջ երթալով ազգայիններու բաղձանքին՝ այս իմաստով հրահանգ դրկած եւ պաշտօն տուած էր Պօղոս Նուպար փաշային իր ներկայացուցիչը լինելու եւ յատուկ պատուիրակութիւն մը կազմելու»⁸³⁷: Այս մասին, սակայն, որեւէ տեղեկութիւն չէին փոխանցած Կ. Պոլսոյ Պատրիարքարանին: Ան յայտնած է, թէ իբրեւ Օսմանեան հպատակներ խորապէս կը գիտակցէին իրենց փոփոկ դիրքին, սակայն այլընտրանք չունէին քան իրենց ներկայ վիճակէն եւ հոգեբանական ծանր կացութեանէն դուրս ելլելը: Ուստի իրենց մնացած էր «ո՛չ միայն հաշտուելու ուսուսահայութեան ձեռք առած միջոցներուն հետ, այլեւ վաւերացնել անոնց որոշումները յաջս օտար պետութիւններու — Ամենայն Հայոց Կաթողիկոսին թողնելով նախաձեռնութեան իրաւունքը եւ հաստատել Պօղոս փաշայի քաղաքական պատուիրակութեան կոչումը»⁸³⁸: Միւս կողմէ, սակայն, առանց Թուրքիոյ հայութեան «ճակատագրի տնօրինութիւն»ը ամբողջովին ձգելու Էջմիածնին կամ ուսուսահայտակ մտաւորականութեան: «Մեր բախտն էր որ պէտք է տնօրինուէր, մեր ինքնաշարժ պահանջները ունէինք, որ մեզի աւելի ծանօթ էին եւ մեր իրաւասութեան կը վերաբերէին», գրած է Փափագեան⁸³⁹:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ.

- ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**
829.- Վ. Գ. Բ. հտ, Գահիրէ, 1950, էջ 3:
830.- Ն, էջ 9:
831.- Ն, էջ 14:
832.- Համահայկական Խորհրդակցութիւններ/ 1915-1920 թ.թ., խմբագիր՝ Ամատունի Վերաբեան, Երեւան, 2004, էջ 9-10:
833.- Ն, էջ 10:
834.- Վահան Փափագեան, Իմ Յուշերը, Բ. հտ, Պէյրութ, 1952, էջ 181-182:
835.- Ն, էջ 182:
836.- Ն, էջ 185:
837.- Անդ:
838.- Ն, էջ 186:
839.- Անդ:

Երեւանի Մէջ Պաշտօնական Եւ Ժողովրդային Բացում՝ Արամ Մանուկեանի Արձանին Վարչապետ Փաշինեան. «Արամ Մանուկեանը Մեր Նորագոյն Պատմութեան Մեծագոյն Առաքելներէն Մէկն Է»

17 յուլիս 2018-ին Երեւանի կեդրոնը՝ Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցած է Հայաստանի Ա. Հանրապետութեան պետական, հասարակական գործիչ, հայոց նորագոյն պետականութեան հիմնադիր, դաշնակցական գործիչ Արամ Մանուկեանի արձանի բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Ձեռնարկին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, դաշնակցական գործիչներ, շարք մը բարձրաստիճան պաշտօնեաներ, հասարակական-քաղաքական գործիչներ, բազմաթիւ քաղաքացիներ:

Ձեռնարկին խօսք արտասանած է վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ ըսած, որ Արամ Մանուկեանը լիարժէք կատարած է իր առաքելութիւնը՝ գտնելով յաղթանակ պարտութիւններու մէջ, եւ այդ առաքելութիւնը սերմանած է այս հողին մէջ:

«Թերեւս սխալած չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ ի դէմս Արամ Մանուկեանի, գործ ունինք մեր նորագոյն պատմութեան մեծագոյն առաքելին հետ: Ան ծնունդ առաւ իրականացնելու մեծ առաքելութիւն մը եւ իրագործեց զայն: Ատրկա իսկապէս մեծագոյն առաքելութիւն է՝ գտնել յաղթանակ պարտութիւններու տեղատարափի մէջ, գտնել յոյս յուսահատութեան հեղեղին մէջ, գտնել ուժ, երբ կը թուի՝ թեւեղ թուլցած են եւ

ծուկերդ ծալուած: Արամ Մանուկեանը լիարժէք կատարեց իր առաքելութիւնը, ան երբեք չապրեցաւ իր, իր բնանիւթին կամ հարազատներուն համար, ան ապրեցաւ իր ժողովուրդին համար, պայքարեցաւ ու յաղթեց իր ժողովուրդին համար: Ան մահացաւ իր գաղթած, կոտորուած անտուն ժողովուրդէն իրեն փոխանցուած հիւանդութեան պատճառով եւ ամբողջացուց իր առաքելութիւնը», ըսած է վարչապետ Փաշինեան:

Վարչապետին կարծիքով՝ Արամ Մանուկեանը այդ առաքելութիւնը իր գոյութեամբ սերմանած է այս հողին մէջ: Վարչապետ Փաշինեան նկատել տուած է, որ մեծ հաւանականութեամբ ան քալած է այն տեղով, ուր հիմա կանգնած են բոլորը:

«Մենք ունինք մեր առաքելութիւնը: Պետական, հանրային այրերու, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու առաքելութիւնն է՝ ըլլալ արժանի Արամ Մանուկեանին, անոր առաքելութեան եւ ապրիլ այնպէս, որ իրաւունք ունենանք ամէն անգամ անոր արձանին դիմացէն անցնելու ընթացքին նայիլ անոր աչքերուն մէջ եւ ըսել, որ տէրն ենք իր առաքելութեան, իր գործը կիսատ չէ: Անոր յաղթանակը կենդանի է», ըսած է վարչապետը եւ աւելցուցած, որ հայ ժողովուրդը յաղթանակած է յաւիտեան:

Ձեռնարկին խօսք արտասանած է ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան,



որ անդրադարձած է Արամ Մանուկեանի կենսաբան, պետական, ռազմական եւ քաղաքական գործունէութեան:

Ելոյթ ունեցած է նաեւ Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը՝ իր հայրապետական օրհնութիւնը բերելով հասարակական-պետական մեծ գործիչ Արամ Մանուկեանի արձանի բացման արարողութեան:

«Այս հանդիսաւոր արարողութեամբ կ'ոգեկոչուի յիշատակը մեր ժողովուրդի նուիրեալ ու վաստակեալ գաւակին, որ մեր պատմութեան դժուարին ժամանակներուն հերոսացաւ հայրենաց պաշտպանութեան մաքառումներուն ընթացքին, Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան գործին մէջ բերած իր անդուլ ջանքերով ու կորովով: Ան սերունդ դաստիարակող ուսուցիչ էր, որ դարձաւ իր ժողովուրդի իրաւունքներու պաշտպան, Վանի ինքնապաշտպանութեան ջահակիր ռազմիկ, Վանի նահանգապետ, մեր հայրենեաց արեւելեան փրկուած հատուածին մէջ պետականութեան վերահաստատման յառաջամարտիկ: Անոր անունը մեր ժողովուրդին համար անբաժանելի դարձած է մէկ դար առաջ արձանագրուած մայիսեան հերոսամարտերու փառապանծ յաղթանակներէն, անկախ պետականութեան վերակերտման պատասխանատուութենէն ու ամբողջանուէր ջանքերէն: Արամ Մանուկեանի արձանի բացումը Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ մայիսեան հերոսամարտերու 100-ամեակի այս տարին խորհրդանշական է՝ իրբեւ երախտի մեր ժողովուրդի մեծ գաւակին, իրբեւ ազգանուիրումի ու հայրենասիրութեան ոգեկոչում մասօր պարտքներու եւ մեր հետագայ սերունդներուն»:

Արամի Պատգամը

ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեանի ելոյթը՝ Արամ Մանուկեանի արձանի բացման առիթով.

Հայաստանի հողի վրայ հայոց պետականութեան կորստից մօտ 9 դար յետոյ վերականգնուած հայոց պետականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան փաստացի հիմնադիր Արամ Մանուկեանի յուշարձանի կանգնեցումը քաղաքամայր Երեւանի կեդրոնում, թէկուզ ուշացած, պատշաճ յարգանքի տուրք է: Յարգանքի մի քայլ, որը ցանկալի է, որ ունենայ իր շարունակութիւնը, այնպէս՝ ինչպէս նախատեսուած էր՝ Արամ արքային նուիրուած Արամի փողոցի վերանունումը Արամ Մանուկեանի փողոց, այդ փողոցի մէկ հատուածում Հայաստանի Ա. Հանրապետութեան նուիրուած այգու հաստատումը՝ խորհրդարանի նախագահների ու վարչապետների կիսանդրիներով: Մենք նաեւ աշխատում ենք, որ այդ փողոցում գտնուող Արամ Մանուկեանի տունը, աւելի ճիշդ, տան մնացած պատերի ներսում կառուցուի Արամ Մանուկեանի եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան նուիրուած տուն-թանգարան:

Հասկանալի է, որ առանց այդ վերականգնուած պետականութեան՝ մենք չէինք ունենայ ո՛չ Խորհրդային Հայաստան, ո՛չ վերանկախացած Հայաստանի Հանրապետութիւն, ո՛չ՝ նոր Հայաստան:

Արամի արձանի կանգնեցումը չի կարելի մեկնաբանել որպէս անհատի պաշտամունքի դրսեւորում: Ընդհակառակը, սա յարգանք է մէկ սովորական մահկանացուի, ով ծնուել էր Միւնիքում, մեծացել Շուշիում, կուսակցական գործունէութիւն ծաւալել Պաքուում, Թիֆլիսում ու Կարսում, ապա՝ անցել Վան, կազմակերպել տեղի հայութեանը, Մեծ եղեռնի օրերին կազմակերպել Վանի ինքնապաշտպանու-

թիւնը եւ հիմք դրել հայոց պետականութեան վերականգնմանը, անցել Երեւան, առաջնորդել մայիսեան ճակատամարտերն ու ՀՀ հիմնադրութիւնը: Եւ որպէս սովորական մահկանացու՝ ինքը եւս վարակուել էր ժողովրդից բժաւոր տիֆով եւ ընդամենը 40 տարեկանում մահացել:

Դեռ խորհրդային ժամանակաշրջանից սկսած՝ Արամի ու իր գործակիցների վաստակի ստորագնահատումի կարեւոր պատճառներից մէկը նրա ՀՅԴ անդամ լինելու փաստն է: Արամը դաշնակցական էր երկու առումով. առաջին՝ կուսակցական՝ իր ամբողջ կեանքը նուիրելով հայ ժողովրդի ազատութեան պայքարին: Նա նաեւ դաշնակցական էր բառի ոչ կուսակցական առումով: Նա հաւատում էր, որ կարող է պայքարել՝ տարբեր ուժեր համախմբելով:

Արամի մտքերից շատերը այսօր եւս մնում են ուսանելի, առաջնորդող: Այդ մտքերից է այս բառերով արտայայտածը.

«Մենակ ենք ու պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛՝ ճակատը պաշտպանելու, թէ՛՝ երկրի ներք կարգ հաստատելու համար»: Սա չի նշանակում չունենալ դաշնակիցներ կամ ընկերներ, բայց նշանակում է՝ յոյսը ամէնից առաջ դնել սեփական ուժերի վրայ՝ թէ՛՝ մեր ներքին խնդիրները լուծելու, թէ՛՝ արտաքին սպառնալիքներն ու մարտահրաւերները դիմակայելու համար:

Արամի արձանը կանգնեցնելով՝ մենք յարգում ենք մեր պետականութիւնը վերականգնած ամբողջ սերնդին: Արամի մտքերից մէկը նաեւ մեր երկիրը ընկողյի նմանեցնելով՝ նրա կորիզը կարեւորելն է: Այսօրուայ մեր Հայաստանի ու Արցախի հանրապետութիւնները մեր հայրենիքի կորիզն են, որի շուրջ ապագայում ձեւաւորուելու է մեր ամբողջական հայրենիքը: Մինչ այդ, սակայն, ինչպէս Արամն է պատգամել, մեր նպատակը պէտք է լինի Հայաստանի կորիզը աճեցնել:

MIKE'S PHOTO & VIDEO PRODUCTIONS INC.

WEDDINGS
ENGAGEMENTS
BAPTISMS
SPECIAL OCCASIONS

www.mikesphotos.com
Tel.: (514) 338-1919
1215 A, QUENNEVILLE, VILLE ST. LAURENT
BY APPOINTMENTS

Iris7 productions
www.iris7.ca

Ձեր պատկերապատմութեան, մկրտութեան, տարեդարձներու, շրջանաւարտից հանդէսներու եւ տօնական առիթներու դրուագները ձեր յուշամատեանին մէջ արձանագրելու համար՝ դիմեցէ Iris 7 հաստատութեան, որ ձեզ պիտի սպասարկէ բժախնորոքէ

Photo & Video services
514 - 476 - 9583

Համագրայինի Գանատայի շրջանի 39-րդ Երջանային ժողով

Համագրային հայ կրթական եւ մշակութային միութեան Գանատայի շրջանի 39-րդ Երջանային ժողովը տեղի ունեցաւ 28 Յունիս 2018-ին, Քինկաթընի Delta Kingston Waterfront պանդոկի ժողովարահէն ներս, մասնակցութեամբ Մոնթրէալի «Սանահին», Թորոնթոյի «Գլաձոր» եւ Գեմպրիճի «Տաթեւ» մասնաճիւղերը ներկայացնող 26 պատգամաւորներու եւ վարչականներու, ինչպէս նաեւ Համագրայինի Կեդրոնական վարչութեան Գանատայի ներկայացուցիչ ընկեր Վիգէն Թիւֆէնքճեանի եւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Ժիրայր Զաքարեանի: Վանգուվըրի «Վարագ» մասնաճիւղը չէր կրցած ներկայ գտնուիլ, սակայն ուղարկած էր իր տարեկան գործունէութեան տեղեկագիրը, որ կարդացուեցաւ ժողովին:

Միօրեայ ժողովը քննարկեց Երջանային վարչութեան անցնող տարեշրջանի գործունէութիւնը եւ բանաձեւեց 2018-2019 տարեշրջանի ուղեգիծը: Ժողովի աւարտին, պատգամաւորները միաձայնութեամբ ընտրեցին Երջանային վարչութեան յաջորդ տարեշրջանի կազմը, բաղկացած ընկերուհիներ Մովիկ Գահվէճեանէ, Մեղեղի Էթիմէճեանէ, Մարալ Հարսեանէ, Սալբի Մարգարեանէ եւ Մարալ Պէրպէրեանէ:

Մոնթրէալիայ արուեստագիտուհի Եւգինէ կը մասնակցի «Unis Ver Intemporel» ցուցահանդէսին

Յունիս 15-էն 5 Օգոստոս 2018-ին մոնթրէալիայ արուեստագիտուհի Եւգինէ Տը Կրէֆ-Եիրմեան, իր մասնակցութիւնը բերաւ Մոնթրէալի «Fairmont Le Reine Elizabeth» պանդոկին մէջ, մօտ քառասուն Քեպէլզի արուեստագէտներու ընկերակցութեամբ, «Unis Ver Intemporel» խորագրով ցուցահանդէսին:



Հետաքրքրական էր տեսնել, թէ ի՞նչ ձևով իւրաքանչիւր արուեստագէտ օգտագործած էր, յատուկ այս ցուցահանդէսին առթիւ, պանդոկին կողմէ տրամադրուած առարկաները:

Ներկաները մեծ թիւով, ուշի ուշով կը գիտէին գործերը փնտռելով անոնց մէջ մերթ թաքնուած եւ մերթ ուշագրաւ ամէնօրեայ իրերը: Եւգինէ ինք օգտագործած էր ճաշկերոյթներու առթիւ սեղաններու թուագրման համար գործածուող ձողը:

Եւգինէ կը Եւգինէի «երկրագունդի ճանապարհորդները» գործը, իր ոճով եւ երկրագունդին վրայ թառած սլացիկ տիպարաներով:

Վանգուվըրի մէջ նշուեցաւ Համագրայինի հիմնադրութեան 90-ամեակը



Շաբաթ, 16 Յունիս 2018-ին, Վանգուվըրի գաղութը, Վանգուվըրի Համագրային «Վարագ» միաւորի նախաձեռնութեամբ, նշեց Համագրայինի հիմնադրութեան 90-ամեակը: Ձեռնարկին ներկայ էին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Հայր Գարեգին Վարդապետ Շըխրըտմեան, Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վահէ Անտոնեան, հիւրեր եւ Համագրայինի առաքելութեան հաւատացող համակիրներ եւ քաջալերող ու խանդավառ հասարակութիւն մը:

Համագրայինի հիմնադրութեան 90-ամեակի տօնակատարութիւնը սկսաւ երեկոյեան ժամը 7:00-ին, Վանգուվըրի Հայ կեդրոնի «Լազարեան» սրահին մէջ: Օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց տիար Ասպետ Չոլաքեանը, որ իր բարի գալուստի խօսքէն ետք յայտնեց օրուան իմաստն ու նպատակը, ներկայացնելով օրուան յայտագիրը: Ապա բեմ հրաւիրեց «Վարագ» միաւորի ատենապետուհի տիկին Մեղրիկ Չափանեանը: Ան նշեց Համագրայինի ճիւղերը՝ նոր սերունդը հայեցի դաստիարակութեամբ օժտելու համար: Ան շեշտեց, որ՝ «այս ձեռնարկը նուիրուած է Հայաստանի առաջին հանրապետութեան 100-ամեակին եւ Համագրայինի հիմնադրութեան 90-ամեակին»:

Համագրայինի «Վարագ» միաւորի կազմակերպած Մանկաշխարհին ձատրակի դասընթացներուն եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հետ համագործակցութեամբ ծնունդ առած «Արցախ» երգչախումբը, որուն ղեկավարութիւնը հմտօրէն կը կատարէ Հայր Գարեգին Վարդապետ Շըխրըտմեանը, հանդէս եկաւ «Չարթիր լաօ» երգով:

Օրուան հանդիսավարը բեմ հրաւիրեց Մոնթրէալէն ժամանած աշուղական եւ ժողովրդական երգերու մեկնաբան Մհեր Մինասեանը, որ հանդէս եկաւ բարձրակարգ մեկնաբանութեամբ՝ իրարու յաջորդող քնարական երգերով:

Մեղրիկ Սիւլահեան Զափանեան

Ascenseur **Adams** Elevator Services Inc.
 PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
 INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian

ԳՐԱԽՈՒԾ ՕՐ

ԳՐԱԽՈՒԾ ՕՐ

ԳՐԱԽՈՒԾ ՕՐ

ԳՐԱԽՈՒԾ ՕՐ

Ուրբաթ 14 ԱՅՊՏԵՄԲԵՐ 2018

Թորոնթօ Հայ Կեդրոն

Յուշ-Երեկոյ

Նուիրուած՝ Ազգային եւ Կուսակցական գործիչ

ԸՆԿ. ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒՍԵԱՆԻ

Սահուան 20-րդ տարեկիցին

ՏԵՐԵԻԱԹԱՓ. Վահե Յարութիւնեան

Կանխահաս մահը կանուխ ընդհատեց սիրելի ընկեր Վահե Յարութիւնեանին կեանքը: Կեանք մը, որ իմաստաւորուած էր գաղափարին նուիրումով եւ անբախտելիորէն կապուած էր Դաշնակցութեան ընթացքին:

Վահե Յարութիւնեան ծնած է 6 օգոստոս 1958 թուականին, Իրանի Սպահան քաղաքին մաս կազմող աւանդապաշտ եւ հայաշունչ Նոր Զուղայի մէջ:

Այստեղ ան ուսումը ստացած է Հայոց ազգային Քանանեան միջնակարգ դպրոցին մէջ: Պատանի տարիքէն անդամագրուած է Հայ յեղափոխական Դաշնակցութեան պատանեկան եւ ապա երիտասարդական միութիւններուն, եղած է գործուն անդամ, վարչական մարմիններուն մէջ ստանձնած է պատասխանատուութիւններ:

Այդ տարիները կը համընկնին Իրանի յեղափոխական փոթորկոտ ժամանակաշրջանին: Վահե, ընկերներու հետ, կը ներգրաւուի հայ համայնքի անվորոշ ժամանակաշրջան մը դառնալով Լեւոն Կեղերեանի վարչութեան անդամ: Անդամակցած է նաեւ Զաւարեան ուսանողական միութեան:

1979 թուականին, ուսումը շարունակելու նպատակով, մեկնած է Լիբանան, ուր հետեւած է Համազգայինի Հայագիտական բարձրագոյն հիմնարկի դասընթացներուն՝ իբրեւ մասնագիտութիւն ընտրելով պատմագիտութեան բաժինը: Աւարտած է 1983 թուականին:

1984-1988 թուականներուն Լիբանանի Հայկազեան համալսարանին մէջ ուսանած է քաղաքագիտութիւն: Միեւնոյն ժամանակ աշխատակցած է Պէյրութի «Ազգակ» օրաթերթին՝ 1988-1990 թուականներուն կատարելով թերթին ներքին էջերու պատասխանատու խմբագրի պարտականութիւնները:

Լիբանանի մէջ ապրած տարիներուն մասնակցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղւոյն կառույցի գործունէութեան: Ստանձնած է Պատանեկան միութեան վարչի եւ դաստիարակի պարտականութիւնը, անդամակցած է ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան՝ որոշ ժամանակաշրջան մը դառնալով Լեւոն Կեղերեանի վարչութեան անդամ: Անդամակցած է նաեւ Զաւարեան ուսանողական միութեան:

1991 թուականին նշանակուած է Դաշնակցութեան Երեւանի մամուլի եւ տեղեկատուութեան կեդրոնի տնօրէն:

Արցախեան ազատագրական պայքարի տարիներուն ընկ. Վահեի զգալի դերակատարութիւն ունեցած է ՀՅԴ-ի մարտական գործունէութեան կազմակերպման հարցերուն մէջ:

1995-ին Հայաստանի իշխանութիւններուն կողմէ Դաշնակցութեան դէմ սանձազերծուած բռնաճնշումներուն պատճառով, հարկադրուած եղած է լքել հայրենիքը եւ կրկին հաստատուիլ Պէյրութ, ուր 1995-1998 աշխատակցած է ՀՅԴ Բիւրոյի «Դրօշակ» պաշտօնաթերթին:

1998 թուականին վերադարձած է Հայաստան, շարունակած աշխատանքը «Դրօշակ»-ի մէջ:

2000 թուականէն մինչեւ կեանքին աւարտը եղած է ՀՅԴ Բիւրոյի գործադիր, ինչպէս նաեւ կատարած է Բիւրոյի գրասենեակի աշխատակազմի ղեկավարի պարտականութիւնները:

Ամուսնացած էր գաղափարակից ընկերուհիին՝ Թամարին հետ, ունին մէկ որդի՝ Գալէն:

Դաշնակցութեան եւ հարազատ



կուսակցութեան ճամբով հայութեան ու հայրենիքին ծառայութեան ամբողջ ուղին Վահե Յարութիւնեան անցաւ իբրեւ համեստ եւ անյաւակնոտ զինուոր: Դաշնակցութեան առաքելութիւնն ու բարոյական նկարագիրը ընկալեց որպէս անսակարկելի արժէքներ, եղաւ բժախնդիր ու կարգապահ ինքնիր նկատմամբ եւ նոյնը ակնկալեց ուրիշներէն: Այս պատճառով ալ Վահեի սոսկ գործադիր չէր՝ պաշտօնեայի նեղ իմաստով: Ան Դաշնակցութեան հաւատարմութիւնը նուիրեալ գործիչ էր բառին ամբողջական առումով:

Երկրորդ դարը ապրող ՀՅԴ-ն ոչ մէկ ատեն զուրկ եղած է տիպար գործիչներէ, իսկ կուսակցական միջավայրին մէջ իշխած է այն համոզումը, որ անփոխարինելիներ չկան: Այնուհանդերձ, ամէն մէկ նշանակալի կորուստէ ետք կը փաստուի, որ իւրաքանչիւրը առանձնատու է իբրեւ գործիչ եւ անհատականութիւն: Վահեի այս կերպարներէն էր: Յիշատակը յաւերժ վաստակով ներկայանալի, գործն ու կեանքը կիսատ թողած սիրելի ընկերոջ:

Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊՍՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Linda Kharaboyan Notaire Notary

Ձեր ևստարական և իրաւաբանական հարցերն ու նրազիրները վստահեցեց մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 • 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Mariage - Portrait - Graduation
Restoration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3

photocristal@hotmail.com www.photocristal.com

Assura Bien inc.

Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիք ունի 20 հայ թարսի վարորդի Միլապլ շրջանին մէջ: Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURVEMENT SUR ONGLES NATURELS

Ստորջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Metrocap Wealth Solutions Inc. License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լոտար եւ իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ԳՐԱԽՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցույց 60-ամեակին առթիվ
 1. Հանդիպում/Լսարան՝
 «Բրիստոնէական Հաւատքի Փորձառութիւնը»
 11-12 Հոկտեմբեր 2018 երեկոյեան

2. Պաշտօնական Հանդիսութիւն եւ Ընթրիք՝
 15 Դեկտեմբեր 2018 երեկոյեան

մանրամասնութիւնները յետագային

ԲԱՐԻ ԱՊԱԲԻՆՈՒՄ

ՀՄԸՄ «Կամֆ»-ի վարչական կազմը եւ Մարզական խորհուրդը
 րարի ապահիւնում կը մաղթեն եղբայր ձՈՐՁ ՀԱՊՐԱՅԵՆՆԻՆ:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը իր խնդակցութիւնները կը յայտնէ ընկերուհիներ **ՏԻՐՈՒԿ ՄԱՆՃԻԿԵԱՆ**ին եւ **ԼԱԼԷ ՄԱՆՃԻԿԵԱՆ-ԵԱՓՈՒՅԵԱՆ**ին վայգի ծննդեան ուրախ առթիւ:



ARMEN PHOTOGRAPHY

Weddings & Special Occasions Photo - Video

Retouching
Image Enhancement
Fine Art Image Effects
Montages
Restoration

Commercial & Industrial Photography

Ad Layouts
Graphic Design

514 - 386 - 9153

Հորիզոն

**շաբաթաթերթը կարիք ունի
Մոնթրէալի մէջ ծանուցում հաւաքողներու:
Բացառիկ շահաբաժնով
վարձատրութիւն
Հետաքրքրուողներ կրնան հեռաձայնել
"Հորիզոնի" խմբագրատուն**

**Սիլվա Էհրամյանին՝
514 332-3757**

**Horizon
recherche des
représentants(es)
pour des annonces
publicitaires**

**Advertising
representatives
needed

- Please call
- SVP appeler**

Sylva Ehramdjian 514 332-3757



Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com




Albert Arkilianian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends
votre propriété gratuitement!

NISSAN | VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS | HONDA

GABRIEL | Kevork Asadourian | GABRIEL

Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur | Instruction Automatique ou manuelle

AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000



NETTOYEUR
MARIE-CLAIRE

**CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)**

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830

horizon

HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

**Abonnement annuel /
Yearly subscription**
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլվահեան
Չեւատրում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիկեան

**Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝**
Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Գազարեան, Վազգէն Տէկիրմէնբաշ

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada



 ԽՈՅ (Մարտ 21 - Ապրիլ 19) - Պիտի կարեւորագույն դրամական օժանդակությունը մը ստանալ տեղէ մը, որ արհամարհելի չէ: Այս անակնկալը հրճուանք պիտի ներշնչէ քեզի: Ամուսնական կամ ընտանեկան քու կեանքիդ մէջ առաւել ուշադիր եղիր:

 ՅՈՒԼ (Ապրիլ 20 - Մայիս 20) - Շնայլ մի ըլլար ծախսերուդ մէջ: Նոյնպէս ջանա՛ լեզու գտնել շրջապատիդ հետ, որպէսզի սխալ մը չգործես: Մարզանք ըրէ, որպէսզի բարեկաւուրի ոչ միայն քու ֆիզիքականդ, այլև՝ հոգեկան վիճակդ ալ:

 ԵՐԿՈՒՐԵԱԿ (Մայիս 21 - Յունիս 21) - Այս շաբթուան ընթացքին մաս պիտի կազմես անակնկալ գրոյցի մը, եղիր անկեղծ եւ հարցերը ստուգելէ ետք տուր քու պատասխանդ: Շահաբեր ծրագիր մը պիտի իրականացնես:

 ԽԵՅԳԵՏԻՆ (Յունիս 22 - Յուլիս 22) - Այս օրերուն դիւանագիտութեամբ պիտի աշխատես: Այս ձեւը պիտի դիւրացնէ քու կապը շրջապատիդ հետ: Մեղմութեամբ վարուէ ամենուն հետ: Անշարժ կալուած գնելու ծրագիր ունիս:

 ԱՌԻԾ (Յուլիս 23 - Օգոստոս 22) - Շաբաթը քիչ մը ոչ քաջալերական կրնայ ըլլալ, բայց դուն պետք է կեդրոնանաս օրուան աշխատանքներուդ վրայ: Հետեւիր նախազգացումներուդ թելադրանքին եւ ոչ՝ ուրիշին: Շատ լաւ արդիւնք պիտի ունենայ քու այս կեցուածքդ:

 ԿՈՅՍ (Օգոստոս 23 - Սեպտեմբեր 22) - Եթէ կ'ուզես անպատեհութիւններէ եւ անիմաստ անակնկալներէ հեռու մնալ, խնայողութեամբ ծախսէ: Առանց մտածելու ծախսելը շռայլութիւն է: Այս օրերուն պիտի սորվիս զիջումներ ընել, որովհետեւ այս ընթացքով շահողը դուն պիտի ըլլաս:

 ԿՇԻՌՔ (Սեպտեմբեր 23 - Հոկտեմբեր 23) - Շատ եռանդուն եւ կորովի պիտի սկսիս նոր աշխատանքիդ, եթէ թզուկներու նմանողութեամբ: Օրերդ արդիւնաւետ պիտի ըլլան ամէն տեսակետով: Նորածեւութեան հետեւիլը լաւ է, բայց ոչ՝ չափազանցուած եղանակով:

 ԿԱՐԻՃ (Հոկտեմբեր 24 - Նոյեմբեր 21) - Մտահոգութիւններդ մէկ կողմ դիր եւ հոգ տար քու արդուզարդիդ: Այս շաբաթավերջին անակնկալ հիւրեր կրնաս ունենալ, հետեւաբար զանոնք ընդունէ սիրալիկ եւ եղիր ներկայանալի: Աշխատանքի մարզին մէջ սպասողական վիճակ պիտի ունենաս:

 ԱՂԵՂԱՒՈՐ (Նոյեմբեր 22 - Դեկտեմբեր 21) - Այս օրերուն քեզի մօտիկ անձերու մօտ պիտի զգաս անսահման խնդութիւն եւ անհոգութիւն: Որքա՛ն հաճելի է եւ օգտակար պաշտպանուած զգալ հարազատներէ: Կը կարծես, որ կարիքը ունիս քաջալերանքի:

 ԱՅԾԵՂՁԻՐ (Դեկտեմբեր 22 - Յունուար 19) - Շաբաթավերջերը կը նմանին փոքր արձակուրդներու, երբ եղանակն ալ մեղմ է, պետք է օգտուիլ անկէ: Այս օրերուն սակայն քեզմէ պիտի պահանջուի փոխել կեցուածքդ, բայց դուն տարօրինակ կերպով կը մերժես:

 ԾՈՎԱՆՈՅՇ (Յունուար 20 - Փետրուար 18) - Այս շաբթուան ընթացքին հոգեմտաւոր տրամադրութեամբ պիտի քննարկես օրուան հարցերդ՝ նոր ուղղութիւն մը տալով որոշումներուդ: Հետեւէ նախազգացումներուդ: Մարզանք կատարէ կանոնաւոր կերպով:

 ՁՈՒԿ (Փետրուար 19 - Մարտ 20) - Քեզմէ վերջնական որոշում մը կ'ակնկալուի: Շրջապատդ յուսախաբ մի ըներ: Միայն դուն պիտի կարենաս որոշ չափով խաղաղութիւն բերել շրջապատեղ ներս: Ուստի, քիչ մը աւելի ներողամիտ աչքով դիտէ ամէն բան:



www.yerkirmedia.am

Հորիզոն

Հասցէ՝ 3401 Olivar-Asselin Montréal, Québec H4J 1L5

Բաժանորդագրուեցէք «Հորիզոն» շաբաթաթերթին

ԱՆՈՒՆ-ՄԱԿԱՆՈՒՆ

ՀԱՍՅԷ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝ Գանատա 80 տոլար առաւել տուրք
Մ. Նահանգներ՝ 95 ամ. տոլար առաւել տուրք
Եւրոպա եւ Միջին Արեւելք՝ 125 ամ. տոլար առաւել տուրք

Ձեր բաժանորդագրութիւնը ապահովելու համար կապ հաստատեցէք «Հորիզոն»ի վարչութեան հետ:

Հեռաձայն՝ 514 332-3757
Ե-նամակ՝ sylvia@horizonweekly.ca



ՀԱՅ ՕԳԼՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԳԱՆԱՏԱ
 ARMENIAN RELIEF SOCIETY - CANADA


Join us in Vancouver September 18 – 23, 2018



In Celebration of "ARAZ" chapter 40th Anniversary and the
 100th Anniversary of the Republic of Armenia

Սենինար-Շրջապտոյտ նուիրում՝

ՀՕՍ-ի Վանգուվըրի « Արազ » մասնաճիւղի հիմնադրութեան 40-ամեակին եւ
 Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին



\$1,300

Includes: All excursions, 40th Anniversary Gala
 and bus transfers from and to the airport. Century
 Plaza Hotel & Spa (1015 Burrard St., Vancouver)
 Breakfast, Lunch and Dinner

(Airfare not included)

ARRIVAL	DAY 1	DAY 2	DAY 3	DAY 4
Tues., September 18	Wed., September 19	Thurs., September 20	Fri., September 21	Sat., September 22
	Capilano Suspension Bridge	Ferry to Victoria's Butchart Gardens and Church and State Winery Tour	SEMINAR	
Welcome reception at Century Plaza Hotel	Sunset Dinner Cruise		Dinner	40th anniversary Gala Evening
For reservations and information: ars-canada@bellnet.ca	Annie Ohanian: 514-929-2239 Sylvie Ohanian: 416-618-9614 Nathalie Manoukian: 905-570-4523		Deadline for reservations: August 30, 2018	

Boucherie et Grillades
D'ORIENT
Épicerie-Charcuterie-Grillades sur Charbon

1627 Curé Labelle, Laval
Qc. H7V 2W6
TONY 450 687 7272

CLIMABEC
REFRIGERATION INC.
DÉTENTEUR DE PERMIS DE RBQ ET CCQ

RÉFRIGÉRATION – CLIMATISATION
VENTE – INSTALLATION – SERVICE
CHUAFFAGE CENTRAL ÉLECTRIQUE

Նոր սարքաւորում
Central air condition
and Heat pump

Պակաւո, Սրլիդ լէվըլ, եւ Գօթէյն
տուներու մատչելի գիներ -
արագ սպասարկութիւն

Սեփականատեր՝
Կարօ Զօփուրեան

477 - 93 Avenue, Chomedey, Laval H7W 3R5
Tel. : (514) 951-5920 | Res. : (450) 686-1965

Dr. Hayk Danaciyán D.M.D.
Chirurgien Dentiste - Dental Surgeon

395, Curé Labelle, Chomedey Laval, Qc. H7V 2S5
Tél.: (450) 973-1046 Fax: (450) 973-9974

Courrier • Colis

Arpie Ajemian

450.934.1049
514.777.3710

www.haxtransport.ca



NISSAN INTELLIGENT MOBILITY^{MC}

LA GRANDE LIQUIDATION

TAUX AUSSI BAS QUE

0%¹
SUR APPROBATION DE CRÉDIT.
SUR MODÈLES SÉLECTIONNÉS.

OU

OBTENEZ JUSQU'À **6 000\$⁺** DE RABAIS
AU FINANCEMENT À UN TAUX STANDARD,
SUR AUTRES MODÈLES SÉLECTIONNÉS.
INCLUT UN RABAIS FIDÉLITÉ / CONQUÊTE.

(LE RABAIS DE 6 000 \$, INCLUANT UN RABAIS FIDÉLITÉ / CONQUÊTE DE 800 \$, EST OFFERT SUR LE PATHFINDER PLATINE.)

DU 1^{ER} AU 31 AOÛT



Rogue SL illustré *

ROGUE VUS¹ AU QUÉBEC EN 2017*

FINANCEMENT À PARTIR DE

0% JUSQU'À **60 MOIS**
sur le Rogue S 2018 à traction avant.

OU OBTENEZ

3 500\$⁺ DE RABAIS
au financement à un taux standard sur les Rogue SL.



Qashqai SL Platine illustré *



Micra SR illustrée *



Sentra SR Turbo illustrée *

QASHQAI

LOCATION À PARTIR DE **233 \$ / MOIS**
AVEC 2 295\$ EN COMPTANT INITIAL - PENDANT 39 MOIS
TAUX DE LOCATION DE 0 %¹

C'EST COMME PAYER **55\$[~]** / SEM. | VALEUR AU DÉTAIL DE **23 663\$**

sur le Qashqai S 2018 à T.A. à boîte automatique.

OU OBTENEZ

2 500\$⁺ DE RABAIS

au financement à un taux standard sur autres modèles Qashqai. Pour clients admissibles.

MICRA SV

LOCATION À PARTIR DE **172 \$ / MOIS**
AVEC 1 395\$ EN COMPTANT INITIAL - PENDANT 39 MOIS
TAUX DE LOCATION DE 0 %¹

C'EST COMME PAYER **39\$[~]** / SEM. | VALEUR AU DÉTAIL DE **16 553\$**

sur la Micra SV 2018 à boîte automatique.

SENTRA

FINANCEMENT À PARTIR DE

0% JUSQU'À **84 MOIS**
sur la Sentra S à boîte manuelle.

OU OBTENEZ

3 000\$⁺ DE RABAIS

au financement à un taux standard sur autres modèles Sentra.

CONSULTEZ NISSANGABRIELJEANTALON.COM POUR PLUS DE DÉTAILS.

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O.
Montréal, QC H3R 2E8
514 509-7777
nissangabrieljeantalon.com

Offres en vigueur du 1er au 31 août 2018. L'offre de location est basée sur une allocation de 20 000 km / an (allocation totale de 65 000 km pour un terme de 39 mois) avec kilométrage additionnel à 0,10\$ / km. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77\$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Pour les offres de location et de financement, les taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15\$) et assurances sont en sus, et exigés à la signature du contrat. * L'offre à la location pour les Micra SR / Qashqai SL Platine 2018 illustrés est pour un terme de 39 mois et équivaut à 39 mensualités de 263\$ / 449\$ (avec 0\$ en comptant initial) lorsqu'elle est louée par l'entremise de NCF. Prix de valeur au détail de 18 653\$ / 34 263\$ pour les Micra SR / Qashqai SL Platine illustrés. ** Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. 1. Exemple de financement : le taux de 0 % au financement s'applique à la Sentra S 2018 à boîte manuelle et est basé sur un prix de vente de 17 063\$, à un taux de financement à l'achat de 0 % pour un terme de 84 mois, ce qui équivaut à 84 versements mensuels de 203\$ avec 0\$ en comptant initial ou un échange équivalent. Les frais de crédit sont de 0\$, pour une obligation totale de 17 063\$. Exemple de location : le taux de 0 % est offert à la location pour la Micra SV 2018 à boîte automatique et est pour un terme de 39 mois, ce qui équivaut à 39 mensualités de 172\$ (avec 1 395\$ en comptant initial) lorsqu'elle est louée par l'entremise de NCF. + Le rabais de 6 000\$ / 3 500\$ / 2 500\$ / 3 000\$ (incluant le rabais fidélité / conquête de 800\$ / 0\$ / 500\$ / 0\$) est applicable au financement à l'achat à un taux standard, uniquement par l'entremise de NCF, d'un modèle Pathfinder Platine / Rogue SL / Qashqai SL / Sentra 2018. Ce rabais ne peut être combiné à un taux de location ou de financement subventionné ni à aucune autre offre et il sera déduit du prix de vente négocié avant les taxes. ± En fonction d'une comparaison des ventes et locations au détail (excluant les ventes pour les parcs de véhicules) entre le 1er janvier et le 31 décembre 2017 de véhicules de la catégorie VUS 2017 (excluant les marques de luxe) au Québec faite par une firme indépendante de consultants. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par Nissan Canada Finance; elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Modèles illustrés à titre indicatif. Les concessionnaires peuvent fixer leurs propres prix. Visitez nissangabrieljeantalon.com pour tous les détails. Des conditions s'appliquent. © Nissan Canada Inc., 2018.



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514
333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

4020, Av. de la Paix

À VENDRE 399 000 \$

11960 Av. du Beau-Bols

À VENDRE 1 475 000\$ ou 5 500\$/mois

12280 Av. Antoine-Berthelet

À VENDRE 1 395 000 \$

11485, Frigon

À VENDRE 698 000 \$

12181, Guérin

À VENDRE 519 000 \$

1693-1695 de Salaberry

À VENDRE 798 000 \$

12212, Av. Martin

À VENDRE 1 495 000 \$

Av. Beau-Bols

À VENDRE 798 000 \$

9, Pl. de Domèvre

À VENDRE 439 000 \$

2080, Ch. Hanover

À VENDRE 1 995 000 \$

4025, du Havre

À VENDRE 498 000 \$

375, Ch. Bas-Ste-Thérèse

À VENDRE 525 000 \$

204, Ch. Bord-de-l'eau

À VENDRE 369 999 \$

4500, des Cageux app.1001

À VENDRE 339 000 \$

83, des Roseaux

À VENDRE 1 198 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5